ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

Հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք.Կապան, Շահումյան 20/32, 3301:
Հեռ.: (+374 285)5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1730: **Գինը՝ 100 դրամ**

ISSN 1829-3468

# Սյունյաց երկիր

ՈՒՐԲԱԹ, 17 ՓԵՏՐՎԱՐԻ 2017Թ.
№ 05 (423)
www.syuniacyerkir.am

***Ինչ որ եղել եր, նա էլ կլինի. եւ ինչ որ արուած եր, նա էլ կանուի. եւ արեգակի տակին բնաւ մի նոր բան չկայ...***

*ԺՈՂՈՎՈՂ, ԳԼՈՒԽ Ա, 9*

**Մեր թերթում հաճախադեպ են հայոց բանակի ձմեռային եւ ամառային զորակոչերի մասին պատմող հրապարակումները: Բայց զինկոմիսարիատների առօրյա աշխատանքներին, մասնավորապես, հայոց բանակում ծառայելուն նախազորակոչային տարիքի պատանիների պատրաստմանը համարյա չենք անդրադարձել: Պատճեռ առիթը կայացավ խմբագրության ստեղծագործական խմբի Սիսիան այցելության ժամանակ, երբ եղանք տեղի զինկոմիսարիատում: Այդ օրը (փետրվարի 6) թեեւ զորակոչն ավարտված էր, մարդաշատ էր զինկոմիսարիատը, մանավանդ դպրոցահասակ պատանիներով: 2001 թվականին ծնված պատանիների կցագրում էր անցկացվում: Զինկոմի աշխատասենյակում գործում էր բժշկական հանձնաժողովը (նախագահ՝ զինկոմ, փոխգնդապետ Մինաս Մկրտչյան, հանձնաժողովի ավագ բժիշկ՝ Իրինա Զիլֆուղարյան, զինկոմիսարիատի զորակոչային բաժնի պետ՝ կապիտան Սիփան Հայրապետյան):**

# Մեկ օր Սիսիանի զինկոմիսարիատում

Իրինա Զիլֆուղարյանը, ով 2016-ի դեկտեմբերից է ստանձնել ավագ բժշկի պարտականությունը, մինչ այդ թերապեւտ էր հանձնաժողովում, ասում է, որ բուժզննում են իրականացնում: *«Մինչեւ զինկոմիսարիատ գալը պատանիները նախնական բժշկական ուսումնասիրություն են անցնում Սիսիանի բժշկական կենտրոնում՝ ըստ մասնագիտությունների, այնտեղ կատարվում են գործիքալաբորատոր բոլոր հետազոտությունները, որոնք նախատեսված են ըստ պաշտպանության նախարարի հրամանի: Սիսիանի բժշկական կենտրոնի բժիշկներն են աշխատում հանձնաժողովում, ովքեր փորձառու մասնագետներ են: Կցագրման այս փուլում փորձում ենք հայտնաբերել, թե որ պատանիներին ինչ հիվանդությունների, ինչ առողջական շեղումների դեպքում կարող ենք ուղարկել հետագա հետազոտությունների: Այդ նպատակով Երեւանում ունենք համապատասխան բազային մասնագիտացված հիվանդանոցներ, որտեղ նախազորակոչային տարիքի պատանիները ենթարկվում են եւ հետազոտման, եւ բուժման»:*

Մեզ նախեւառաջ հետաքրքրում էր նախազորակոչային տարիքի պատանիների առողջական վիճակը եւ ֆիզիկական պատրաստականությունը: Տեղեկանում ենք, որ պատանիների շրջանում տարածված են սրտի եւ տեսողության հետ կապված խնդիրները: Նաեւ իմացանք, որ 90-ականների սկզբին՝ այսպես ասած մութ ու ցուրտ տարիներին, ծնվածների շրջանում շատ են եղել առողջական խնդիրներ ունեցողները, որ 1995-1996 թվականներից հետո ծնվածների մոտ առողջության բարելավում է նկատվում:

*«Կան պատանիներ, որոնց հիվանդ լինելու մասին ծնողները չգիտեն, զինկոմիսարիատում են իմանում,* – ասում է Մինաս Մկրտչյանը, – *կամ անտարբեր են, կամ ֆինանսական միջոցները չեն բավականացնում որդուն բուժման տանելու: Եթե երեխան գանգատվում է, մտածում են՝ դեղորայքով կարելի է հարցը լուծել: Հետո զինկոմիսարիատում պարզվում է, որ սրտի պրոբլեմ ունի: Կամ էլ առողջության հետ կապված խնդիրները գործիքային քննության ժամանակ են հայտնաբերվում: Եթե այս-*

էջ 3

# Ինչու էր 1988-ի փետրվարին փոթորկվել Բաքուն

1988 թվականի հունվարի 2-ին Սիսիանի կուսշրջկոմի առաջին քարտուղար Շչորս Դավթյանի եւ Երեւանի պետական համալսարանի դասախոս Իշխան Բալյանի հետ մեկնեցինք Լեռնային Ղարաբաղի Ինքնավար մարզ՝ ղարաբաղյան մեր բարեկամների Նոր տարին շնորհավորելու նպատակով: Ճանապարհին մտանք Շուշիի Սուրբ Ամենափրկիչ Ղազանչեցոց եկեղեցի: Նորոգումն ավարտին մոտ էր: Տարիներ առաջ եղել էի եկեղեցում: Այն ժամանակ գտնվում էր անմխիթար վիճակում: Այս անգամ արդեն բավականին հաճելի տեսք էր ստացել: Եկեղեցու նորոգման վարպետ Վոլոդյան հաճախակի էր գալիս Սիսիան, բազալտից բացի փոխադրում այլ շինանյութեր, մասնավորապես ցեմենտ եւ արմատուրա: Ամենուրեք աջակցում էին նրան: Պատմում էր նաեւ, թե որքան մեծ դժվարությամբ է ղարաբաղցիներին հաջողվել համոզել Ադրբեջանի մշակույթի նախարարությանը՝ Շուշիի եկեղեցին մտցնել նորոգվող պատմամշակութային հուշարձանների ցուցակի մեջ: Թողնելով եկեղեցին, մի պտույտ գործեցինք քաղաքում: Հոգեհարազատ էին հին շինությունները, նրանք, որոնք մերն էին, հայկական էին: Երբեմնի հայկական Շուշին նվաճվել էր ադրբեջանառոճ նոր շինություններով: Միակ հայկական դպրոցը տեղավորված էր հին ռեալական դպրոցի շենքում: Մինչդեռ ըստ նշանավոր ազգագրագետ Երվանդ Լալայանի՝ 19-րդ դարի վերջերին Շուշիում գործել են 6 դպրոցներ եւ ուսումնարաններ, որոնցից միայն մեկն է եղել թուրքական: *«Հայոց թեմական, ռեալական, քաղաքային, թուրքական դպրոցներում եւ հինգ միդասյա տղայաց մասնավոր ուսումնարանում սովորել են 1209 հայ, 18 ռուս, 5 վրացի եւ 305 թուրք, իսկ օրիորդաց Մարիամյան արքունական ուսումնարանում՝ 137 հայ, 12 ռուս, 1 վրացի»* (Երվանդ Լալայան, Եր., երկեր հ. 2, էջ 89):

...Այդուհանդերձ պետք է իջնեինք Ստեփանակերտ: Մեզ իր տանը հյուրընկալեց Ստեփանակերտի քաղխորհրդի նախագահ Վոլոդյա Թովմասյանը: Այդտեղ էին եկել նաեւ մարզի մի քանի ղեկավար աշխատողներ: Նոր տարվա բարեմաղթանքներից զատ, խոսակցության թեման նաեւ մարզն էր, նրա ճակատագիրը: Նրանց այնքան չէին մտահոգում սոցիալական եւ տնտեսական ոլորտներում կուտակված հիմնախնդիրները, որքան Ադրբեջանի կողմից ժողովրդագրական իրավիճակի փոփոխության հասնելու բացահայտ նկրտումները, այդ նպատակով իրականացվող էթնիկ զտումների, մշակութային զարգացման արգելքների, բնակարանային շինարարությունը հիմնականում ադրբեջանական բնակավայրերում կենտրոնացնելու, մարզի տարածքում նոր ադրբեջանական բնակավայրեր հիմնելու քաղաքականությունը: Ասկերանի կուսշրջկոմի առաջին քարտուղար Վաչագան Գրիգորյանը, ով հետագայում ընտրվեց Ազգային Խորհրդի նախագահ եւ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավոր, պատմում էր, թե ինչպես են Աղդամի շրջանից մի խումբ ադրբեջանցիներ փորձել նաեւ իրենց շրջանի տարածքի մեջ մտնող անտառի բացատում բնակավայր հիմնել եւ ինքն ինչպես է միլիցիայով նրանց մի կերպ դուրս հանել շրջանից: Փաստորեն արդեն համարյա հայաթափված Նախիջեւանի հաջողված փորձը սկսվել էր կիրառվել նաեւ Ղարաբաղում: (Դեռեւս 1828 թվականին ստեղծված Հայկական մարզի մեջ մտնող հայաշատ Նա-

էջ 6

# Կառավարությունում քննարկվել են Սյունիքի եւ Լոռու մարզերից ներկայացված ծրագրերը

**Վարչապետ Կարեն Կարապետյանի գլխավորությամբ կառավարությունում տեղի է ունեցել հերթական խորհրդակցությունը, որի ընթացքում քննարկվել են ՀՀ Սյունիքի եւ ՀՀ Լոռու մարզերից ներկայացված ներդրումային ծրագրերի փաթեթները:**

Սյունիքի մարզից ստացված ծրագրերը վերաբերում էին գյուղտեխնիկայի մատակարարման բազայի ձեւավորմանը, սառնարանային տնտեսությունների հիմնմանը, օրգանական գյուղմթերքի վերամշակմանը եւ այլն:

Լոռու մարզից ներկայացվել էին հացի արտադրությանը, ֆերմերային տնտեսությունների ստեղծմանը, թղթե տոպրակների արտադրությանը, գյուղմթերքի վերամշակմանը վերաբերող ծրագրեր:

Վարչապետը նշել է, որ շահագրգիռ գերատեսչությունները պետք է ակտիվ համագործակցեն մարզերի գործարարների հետ, որպեսզի կառավարությունում քննարկման ներկայացվեն բոլոր համապատասխան կառույցների կողմից նախապես գնահատված եւ տնտեսապես հաշվարկված ծրագրեր: *«Հավանություն ենք տալու տրամաբանական, նոր աշխատատեղեր ստեղծող ծրագրերին ու լավ գաղափարներին»,* - ասել է վարչապետը:

**10 փետրվարի 2017, gov.am**

# Ձյունապաշտպան ցանցերի փեղադրում՝ Սյունիքի մարզպետի նախաձեռնությամբ

Մ-2 միջպետական մայրուղու՝ Շինուհայրի խաչմերուկից մինչեւ Գորայք համայնք ընկած հատվածի որոշ տեղերում ձմռան ամիսներին դժվարանցանելի վիճակ է ստեղծվում: Ձնաբուքը ձյունը լցնում է ճանապարհը՝ երբեմն կաթվածահար անելով երթեւեկությունը: Այդպիսի մի իրավիճակ ստեղծվեց անցյալ տարվա հունվարի 3-4-ին, երբ ձյան տակ մեքենաներ մնացին Շինուհայրի խաչմերուկ-Հարժիսի խաչմերուկ հատվածում: Խորհրդային տարիներին ճանապարհի բքաառատ հատվածներում փայտե ցանցապատնեշներ էին տեղադրված, որոնք ճանապարհը փոքրիշատե պաշտպանում էին քամու բերած ձյունից: Հետո այդ ցանցապատնեշները հուշ դարձան:

Ինչեւէ, «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» փակ բաժնետիրական ընկերության ոչ արտադրական շինարարության դեպարտամենտի ընթացիկ նորոգումների սպասարկման բաժնի աշխատողները փետրվարի 7-ից Մ-2 միջպետական ճանապարհի 227-228 կիլոմետրում (Շինուհայրի խաչմերուկի աջակողմյան հատված) սկսել են երկու մետր բարձրությամբ ձյունապաշտպան ցանցերի տեղադրումը: Ինչպես տեղեկացրեց բաժնի պետ Համլետ Սողոմոնյանը, Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանի նախաձեռնությամբ փետրվարի 7-ից սկսել են ձյունապաշտպան պլաստմասայե ցանցերի տեղադրումը: Ընդհանուր ծրագիրն ընդգրկում է 25 կիլոմետր տարածություն, ցանցեր կտեղադրվեն տվյալ տարածաշրջանի ճանապարհաշինական ընկերության ցուցումով, ընդ որում՝ այժմ տեղադրում են փորձնական՝ մեկ կիլոմետր տարածության վրա, եթե դրական արդյունք տա, ամռանը դրանց մասսայական շինարարություն կիրականացնեն: Սկզբունքն այն է, որ աշնանը ցանցերը տեղադրվեն, իսկ գարնանը հանվեն: Անհրաժեշտության դեպքում ցանցապատնեշները կտեղադրվեն ճանապարհի երկու կողմում:

Բաժնի պետի փոխանցմամբ՝ գերմանական արտադրության այդ ցանցապատնեշները Ռուսաստանի Դաշնությունում քննություն են բռնել:

**ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ**

# Հաճելի անակնկալ

**Անգելինա Հովհաննիսյանը սովորում է Կապանի թիվ 13 միջնակարգ դպրոցի ութերորդ դասարանում, նաեւ քաղաքի թիվ 3 երաժշտական դպրոցի վեցերորդ դասարանում: «Շնորհալի, ընդունակ սան է, բազմաշնորհ», - նրա մասին ասում է Անգելինայի ջութակի դասատուն՝ Լիանա Սողոմոնյանը:**

Տարիքի հետ կապված անհրաժեշտություն է լինում փոխել գործիքը: Վերջին ժամանակներս Անգելինայի դեպքում եւս նման խնդիր է ծագել. նոր ջութակ ունենալ: Բայց նա սոցիալապես անապահով ընտանիքից է: Տատը եղել է Սյունիքի մարզպետի մոտ՝ աշխատանքի տեղավորման հարցով օժանդակություն խնդրելու, որ կարողանա թոռնուհու համար ջութակ գնել: Եվ ահա հաճելի անակնկալը չուշացավ: Փետրվարի 9-ին Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանը պատանի ջութակահարուհուն հանձնեց նոր ջութակ:

*– Մեր դպրոցում միջոցառումներ անցկացվում են: Հուսով եմ, որ անձամբ կհրավիրենք մարզպետին եւ մեր երախտագիտությունը կհայտնենք, նա էլ կունկնդրի Անգելինայի կատարումը եւ կհամոզվի, որ նվերը տեղին եւ ժամանակին է,* – ասաց Լիանա Սողոմոնյանը:

Թերթի միջոցով Սյունիքի մարզպետին իրենց շնորհակալությունն են ցանկանում հայտնել փոքրիկ ջութակահարուհու մայրը՝ Անգին Հովհաննիսյանն ու տատը՝ Ասյա Սարգսյանը:

**ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ**

# Գազի անվտանգ շահագործումը՝ առաջնային նպատակ

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016թ. նոյեմբերի 25-ի նիստում, քննարկելով 2016թ. նոյեմբերի 1-ին «Գազպրոմ Արմենիա» ՓԲ ընկերության ներկայացրած հայտը, որոշում ընդունվեց 2017թ. հունվարի 1-ից սահմանել գազի նոր սակագներ մեր հանրապետությունում՝ ըստ սոցիալական ու բիզնես խմբերի: Առաջին խմբում ընդգրկված են սոցիալապես անապահով ընտանիքները, նրանց

էջ 6

**ԱՅՑԵՔԱՐՏ**

*ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆ. ծնվել է 1970թ. հոկտեմբերի 26-ին Կապանում: 1986-87թթ. ավարտելով Կապանի թիվ 6 միջնակարգ դպրոցը՝ ընդունվել է Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտի Մեքենաշինության տեխնոլոգիա ֆակուլտետը, որն ավարտել է 1993թ.՝ ստանալով ինժեներ-մեխանիկի որակավորում: 1993-95թթ. ծառայել է հայոց ազգային բանակում: Աշխատանքային գործունեությունը սկսել է «Հայգազ» ՓԲԸ «Սյունիքգազ» գազաբաշխման տարածքային մասնաճյուղում՝ վթարավերանորոգման ծառայության ավագ վարպետ: 2005թ. սեպտեմբերից մինչեւ 2006թ. մարտ աշխատել է շահագործա-տեխնիկական բաժնում՝ ավագ ճարտարագետ: 2006թ. մարտից մինչեւ 2016թ. նոյեմբերի 9-ն աշխատել է վթարավերականգնման ծառայության պետ: 2016թ. նոյեմբերի 9-ից «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Սյունիքի ԳԳՄ տնօրենն է: ՀՀԿ անդամ է: 2013 թվականից հեռակա ուսուցմամբ սովորում է Ճարտարապետության եւ շինարարության Հայաստանի ազգային համալսարանի մագիստրատուրայում՝ Քաղաքային տնտեսություն եւ ջերմագազամատակարարում մասնագիտությամբ: Ամուսնացած է, ունի երեք երեխա:*

# Իսկ մենք ծանո՞թ ենք Ընտրական օրենսգրքի նորամուծություններին, գիտե՞նք մեր իրավունքներն ու պարտականություններն ընտրական գործընթացում, թե՞...

Ազգային ժողովի առաջիկա ընտրությունը տեղի կունենա առաջին անգամ՝ Հայաստանի նորացված սահմանադրության եւ հիմնովին փոփոխված Ընտրական օրենսգրքի պայմաններում:

Հիմա, իհարկե, ժամանակը չէ եւ հարկ չկա խոսել այն մասին, թե որքանով էին հիմնավորված, պահանջված, արդարացված այդ փոփոխությունները: Հիմա դրանք կյանքի կոչելու ժամանակն է…

Ընտրական ցանկացած գործընթացի (այդ թվում եւ ապրիլյան ընտրության) գլխավոր դեմքը, գլխավոր գործող անձն ու դերակատարն ընտրողն է լինելու եւ ոչ ամենեւին հանձնաժողովը, շտաբը, կուսակցությունը (կուսակցությունների դաշինքը), պատգամավորության թեկնածուն:

Հետեւաբար՝ բոլորիս հետաքրքրող առանցքային հարցն ընտրողի վարքագիծն է, վերաբերմունքը, գիտակցության, իմացության աստիճանը:

Դա էլ պայմանավորված է, նախեւառաջ, մեկ հանգամանքով՝ ընտրողը ծանո՞թ է Ընտրական

# Մեկ օր Սիսիանի զինկոմիսարիատում

էջ 1

*տեղ որեւէ դժվարություն է ծագում, պատանուն ուղարկում ենք հանրապետության մասնագիտացված կլինիկաներ: Իսկ բանակ զորակոչվելիս եթե զինակոչիկն առողջական խնդիրներ է ունենում, կենտրոնական հավաքակայանի ռազմաբժշկական հանձնաժողովը որոշում է կայացնում, թե որքան ժամանակ պիտի հատկացնել (վեց ամիս, մեկ տարի, երեք տարի) բուժման համար: Լինում են դեպքեր, երբ պատանու ունեցած հիվանդությունն անհամատեղելի է լինում ծառայության հետ: Անցած զորակոչին երկու հոգի արյան հետ կապված հիվանդություն ունեին, նրանք զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչվեցին»:*

Իսկ կցագրման փուլում դժվարություններ ծագո՞ւմ են: *«Եթե պատանին Սիսիանում է, ոչ մի խնդիր,* - մանրամասնում է Մ.Մկրտչյանը, - *եթե քաղաքից դուրս է գտնվում, բերել ենք տալիս, եթե արտերկրում է, արդեն պրոբլեմ է: Պատահում է՝ պատանին մինչեւ 18 տարեկանն արտերկրում է լինում, զորակոչի ժամանակ արդեն գալիս է, երբ արտերկրում ինչ-որ խնդիրներ են ծագում: Օրինակ, այս զորակոչին մեկը եկավ, բուժզննման ժամանակ պարզվեց, որ սրտի խնդիր ունի, մեկ տարի տարկետում հատկացվեց բուժվելու համար»:*

Ինչ վերաբերվում է զինվորացու տղաների ֆիզիկական պատրաստականությանը, զինկոմի դիտարկմամբ գյուղաբնակ պատանիները քաղաքաբնակներից տարբերվում են, քանզի վերջիններս ավելի շատ են նստում համակարգչի մոտ: Ողնաշարի կորություն ունեն, դա համակարգչի «մեղքն» է: Մինչդեռ գյուղացի երեխայի՝ այգում եւ բանջարանոցում աշխատելը բարերար ազդեցություն է ունենում նրա մկանային համակարգի վրա: Նաեւ դպրոցներում սակավ ուշադրություն է դարձվում պատանու ֆիզիկական դաստիարակության վրա, արդյունքում՝ զինակոչային տարիքի պատանին երկու-երեք անգամ չի կարողանում ձգվել պտտաձողի վրա…

**Բժշկական հանձնաժողովի ավագ բժիշկ Իրինա Ջիլֆուղարյանը զննում է հերթական դպրոցականին**

Սիսիանում ձմեռային զորակոչը մեկնարկել է հունվարի 12-ին եւ ավարտվել ամսի 29-ին: Ըստ զինկոմի՝ զորակոչի պլան-առաջադրանքը կատարվել է: Զինակոչիկների առաջին խմբին զինկոմն ուղեկցել է հանրապետական կենտրոնական հավաքակայան: *«Այս անգամ հայրենիքի ապագա պաշտպաններին զինվորական համազգեստը հանձնվեց հենց հանրապետական հավաքակայանում: Ճիշտը դա էր, քանզի քաղաքացիական զգեստով մինչեւ զորամաս հասնելը, հնարավոր է, մարդ մրսի: Իսկ այս տարի ահավոր ցուրտ էր, հատկապես մայրաքաղաքում: Հետադարձ չենք ունեցել, պրոբլեմներ չենք ունեցել, զինակոչիկները նորմալ հետազոտված են եղել ըստ պաշտպանության նախարարի հրահանգների»,* - զորակոչի մասին իր տպավորությունն էր ներկայացնում զինկոմը:

Զինկոմիսարիատների վրա է դրված ռազմական ուսումնարանները կադրերով համալրելը: Սիսիանցի պատանիները պատրաստակամություն հայտնո՞ւմ են սովորելու ռազմական բարձրագույն հաստատություններում, կրելու սպայի համազգեստ: Տեղեկացնում են, որ անցած զորակոչին ինը հոգի դիմել է Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտ: Բացի այդ ժամկետային զինծառայությունն ավարտած չորս սերժանտ ցանկություն է հայտնել պայմանագրային հիմունքներով ծառայել ՀՀ զինված ուժերում:

> *Զորակոչային բաժնի պետն էլ կողքից հավելում է, որ այժմ աղջիկներն էլ են ցանկանում ծառայել բանակում: Անցած տարի մեկը դիմել է եւ ընդունվել Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտ:*

Զրույց եղավ նաեւ այլընտրանքային ծառայության մասին: Խոսքը նրանց մասին է, ովքեր կրոնական համոզմունքից ելնելով՝ զենք չեն բռնում, եւ օրենքը հնարավորություն է տալիս սանիտարական-սանմաքրման աշխատանքներ կատարելով՝ անցկացնել ծառայությունը: Այս դեպքում արդեն երեք տարի են ծառայում: Զինկոմի փոխանցմամբ՝ երկու հոգի Վարդենիսի հոգեբուժարանում են ծառայություն տարել, արդեն զորացրվել են: Եվս մեկը ծառայությունն «անցկացնում» է Սիսիանի կոմունալ տնտեսությունում: Դեռ չի զորացրվել:

- Այսօր ի՞նչ դժվարություններ կան զինկոմիսարիատի աշխատանքում, համենայն դեպս հարյուրավոր ընտանիքների հետ եք շփվում:

*- Գիտե՞ք ինչ, զինկոմիսարիատի հերթապահին հրաման եմ տվել, այստեղ եկողների, երիտասարդ լինի թե ծեր, եթե հարցը չեք կարողանում լուծել, ուղարկեք ինձ մոտ, նստենք, քննարկենք, տեսնենք ինչ խնդիր ունեն, մեր հնարավորության սահմաններում լուծենք, ճանապարհ դնենք: Մարդ կա՝ Շենաթաղից է հասնում այստեղ: Շաբաթական երկու օր է ընդունելություն լինում, հո չեմ ասելու՝ այսօր ընդունելության օր չէ, գնա՝ վաղը կգաս: Չկա այդպիսի բան, ընդունում, ճանապարհում ենք, որովհետեւ չեմ ուզում որեւէ մեկին նեղացնել, քանզի ես էլ ապրում եմ նրանց հետ:*

Օրեր առաջ լրացավ հայոց ազգային բանակի կազմավորման 25-րդ տարեդարձը: Այդ առիթով իր շնորհավորանքի խոսքն ուներ զինկոմ, փոխգնդապետ Մինաս Մկրտչյանը. *«Շնորհավորում եմ զինվորից մինչեւ գերագույն գլխավոր հրամանատար՝ ՀՀ զինված ուժերի կազմավորման 25-րդ տարեդարձի առիթով: Երկու պատերազմ եմ տեսել՝ աֆղանականը եւ Արցախյանը, գիտեմ խաղաղության գինը: Տա Աստված, այլեւս զոհեր ու վիրավորներ չլինեն, մեր տղաները դառնան խաղաղ օրերի զինվորներ: Իսկ եթե հակառակորդը մեզ պատերազմ պարտադրի, բոլորս ենք գնալու մարտադաշտ: Մեր նվաճածը ջուրը չենք գցելու: Բանակի 25-րդ տարեդարձի միջոցառման էի հրավիրված մի քանի տեղից, բայց մանկապարտեզը նախընտրեցի: Տեսնեիր՝ մանկահասակ երեխաներն ինչ ոգեւորությամբ էին հայրենասիրական երգեր երգում: Բա էդ երեխաների խաղաղ անդորրը ո՞վ է ապահովելու…»:*

**ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ**

---

Օրենսգրքի նորամուծություններին, գիտի՞ իր իրավունքներն ու պարտականություններն ընտրական գործընթացում:

Այդ հարցերը, ցավոք, դրական պատասխան չունեն դեռեւս:

Եվ ուրեմն՝ առայժմ լուրջ չէ խոսել գիտակցված ընտրության, ազատ կամարտահայտության, երկրի համար քաղաքացիական պատասխանատվության մասին:

Ըստ որոշ փորձագետների՝ դրա ուղղակի հետեւանքը կարող է լինել անվավեր քվեաթերթիկների աննախադեպ առատությունը:

Դա, իհարկե, ճիշտ դիտարկում է, բայց ուրիշ եւ էական հետեւանքների էլ կարող ենք բախվել:

Իրականում նվազելու է գիտակցված ընտրության, երկրի համար քաղաքացիական պատասխանատվության մղումով քվեատուփին մոտեցողների շարքը: Ու առավել ազդեցիկ է դառնալու սովորույթի գործոնը՝ իր տարատեսակ դրսեւորումներով:

Սովորույթի ուժին անդրադարձել են շատ իմաստուններ՝ սկսած Արիստոտելից: Եվ ոչ ոք այդ գործոնը թերագնահատելու փորձ անգամ չի արել:

Սովորույթ են հասարակության մեջ իշխող բարքերը, մարդկանց տնտեսական կյանքի առանձնահատկությունները, սոցիալական վիճակը, որոնք ուղղակիորեն ազդում են անձի վարքագծի վրա: Վերջին տարիներին, պատմականորեն ձեւավորված սովորույթներին զուգահեռ, մեր հասարակությանը պատվաստվեցին սովորույթներ՝ կապված ընտրական գործընթացների հետ: Դրանցից են հատկապես մերկանտիլությունը (շահամոլությունը), գործատուների անձնական դիրքորոշումը, անձնական եւ բարեկամական հարաբերությունները, կեղծարարությունը… Այունիքի ավանդապահ շատ բնակավայրերում վճռորոշ է սովորույթներից մեկի՝ գերդաստանի (թայֆայի) համախմբման իներցիան, որը զորավոր է ցանկացած կուսակցությունից, գաղափարախոսությունից, անգամ ընտրակաշառքից: Մյուս կողմից՝ մեկ կոնկրետ թայֆայի՝ մղմողն ընկած, բայց եւ շպարված տեսանկյունից մի ամբողջ համայնք, տարածաշրջան կառավարելու, հնազանդեցնելու խեղկատակությունը կհանդիպի մեկ այլ եւ զորավոր բեւեռի առաջացման (բնազդորեն կամ արժանապատվության զգացումի թելադրությամբ)՝ դրանից բխող հետեւանքներով, ինչը նույնպես սովորույթ է: Մի հանգամանք էլ կա. Կապանում, Գորիսում, Սիսիանում, օրինակ, չի երեւում մի բեւեռ կամ թայֆա (գերդաստան), որ սպասվող համամասնական ընտրությունների բազմաբեւեռության, պատգամավորության մի քանի տասնյակ թեկնածուների պարագայում հասարակության մեջ 5-10 տոկոսից ավելի վարկանիշ ունենա: Համենայն դեպս մեր հարցումներն այդ են վկայում (մնացյալ թվերն ու վկայակոչումները ֆիկցիա են, միրաժ):

Այսպիսով՝ մեր նախընտրական իրականությունն-կշեռքի մի նժարին ընտրողների գիտակցված կողմնորոշումն է, քաղաքացիական պատասխանատվությունը երկրի համար, մյուս նժարին՝ սովորույթն է՝ իր բազում (երբեմն խիստ արատավոր) դրսեւորումներով:

Ո՞ր ուղղությունը կիշխի եւ կհաղթի ապրիլի 2-ին…

Հարցի պատասխանը կիմանանք ժամանակի ընթացքում, բայց երկրի ապագայով մտահոգ ուժերը կարող են կշեռքի նժարը շատ թե քիչ թեքել հօգուտ գիտակցված ընտրության եւ քաղաքացիական պատասխանատվության, եթե…

Դրան հասնելու ուղիներից մեկը (առաջինը) Ընտրական օրենսգրքի նորամուծություններն ընտրողին հասցնելն է, ընտրողի իրավունքներն ու պարտականությունները մարդկանց պարզաբանելը:

Ի դեպ, մեր հանրապետությունում ո՞վ է պատասխանատու դրա համար (արդյո՞ք Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, թե՞… ):

Որքան էլ տարօրինակ է՝ պետական միջոցներով ու պետական հովանավորությամբ գործող լրատվամիջոցներն էլ առայժմ նկատելի քայլ չեն կատարում այդ ուղղությամբ, թեեւ երկու ամսից քիչ ժամանակ է մեզ բաժանում ընտրությունից:

Ընտրական նոր օրենսգրքի նորամուծություններին քաջատեղյակ մասնագետներն էլ, ըստ էության, շատ չեն: Տարածքային ընտրական հանձնաժողովների անդամների զգալի մասն էլ, որքանով տեսնում ենք, տեղյակ չեն առաջիկա ընտրության նրբություններին, առանձնահատկություններին:

Ընտրական օրենսգրքին առայժմ կարելի է ծանոթանալ միայն էլեկտրոնային միջոցներով՝ ոչ բոլորին հասանելի:

Շատ չուշացա՞վ ԸՕ-ի տպագիր տարբերակի հրատարակումն ու մասսայականացումը:

Նորի՞ց հույսներս դնենք քվեարկությունից մի քանի օր առաջ ընտրական տեղամասերի պատերին ավանդաբար փակցվող պլակատների եւ ուշացած հեռուստահոլովակների վրա:

Թե ինչ քայլեր կձեռնարկեն պատկան մարմիններն այդ ուղղությամբ՝ կտեսնենք, իսկ մենք, մինչդեռ, մնում ենք հաստատ համոզման, որ առանց Ընտրական օրենսգրքի պատշաճ իմացության անիմաստ է ակնկալել, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացին ապրիլի 2-ին գիտակցված եւ պատասխանատու վերաբերմունք կցուցաբերի երկրի ապագայի հանդեպ:

Իսկ միգուցե սովորույթի ուժով եւ ավանդական մեթոդներով ընտրությո՞ւնն է նախընտրելի…

**ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

---

## Այունյաց թեմի առաջնորդական տեղապահին՝ «Գարեգին Նժդեհ» մեդալ

Այունյաց թեմի առաջնորդական տեղապահ Մակար վարդապետ Հակոբյանը ՀՀ պաշտպանության նախարարի հունվարի 25-ի հրամանով պարգեւատրվել է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության «Գարեգին Նժդեհ» մեդալով:

Շնորհավորում ենք, մաղթում առողջություն, արեւշատություն:

**«Այունյաց երկիր»**

# ՆԵՐՍԵՍ ՇԱԴՈՒՆՑ. «Չստացվող գործ չկա, պարզապես պետք է նվիրվել»

**Տեղ բազմաբնակավայր համայնքը՝ Տեղ կենտրոնով, ներառում է յոթ բնակավայր՝ Տեղ, Կորնիձոր, Քարաշեն, Խանածախ, Խոզնավար, Վաղատուր, Արավուս: Բնակչությունը՝ մոտ 6000 մարդ, որից 4090 ընտրող: Ընդհանուր առմամբ համայնքն ունի 1410 տնտեսություն, 14 հազար 861 հա ընդհանուր հողատարածք, որից՝ 5900 հա վարելահող: Սեպտեմբերի 18-ին կայացած ՏԻՄ ընտրությունների արդյունքներով խոշորացված համայնքի ղեկավար է ընտրվել Ներսես Շադունցը՝ 2708 կողմ քվեով:**

**ԱՅՑԵԱՐՏ**

*Ներսես Շադունց. ծնվել է 1969թ. հունիսի 11-ին Տեղ գյուղում: 1986թ. ավարտել է Տեղի թիվ 1 միջնակարգ դպրոցը: 1986-1993թթ. սովորել է Երեւանի անասնաբուծական-անասնաբուժական ինստիտուտի անասնաբուծական ֆակուլտետում՝ ստանալով անասնաբույծ-ինժեների որակավորում: 1987-89թթ. ծառայել է խորհրդային բանակում: 1996-1997թթ. աշխատել է Տեղի գյուղխորհրդում՝ քարտուղար, 1997-99թթ.՝ Տեղ համայնքի գյուղապետի տեղակալ, 1999-2002թթ. եղել է Տեղ համայնքի ղեկավար:*
*2005-2012թթ. եղել է Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության եւ բնապահպանության վարչության գլխավոր մասնագետ, բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ, 2012-2013թթ՝ գյուղատնտեսության եւ բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի պետ:*
*2013 թվականից Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի հրամանով նշանակվել է գյուղատնտեսության եւ բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի պետի պաշտոնում:*
*2016թ. սեպտեմբերի 18-ին ընտրվել է Տեղ բազմաբնակավայր համայնքի ղեկավար:*
*Ամուսնացած է, ունի 2 զավակ:*

2016թ. նոյեմբերի 7-ից աշխատանքային պարտականություններին անցած համայնքի ղեկավարի համոզմամբ՝ չստացվող գործ չկա, պարզապես պետք է գործին նվիրվել: Այս կարճ ժամանակահատվածում համայնքում մի շարք աշխատանքներ են իրականացվել. ամբողջովին վերանորոգվել է Տեղի թիվ 1 նախադպրոցական ուսումնական հաստատության տանիքը, փոխվել են լուսամուտները, բնակավայրերում իրականացվում է աղբահանություն, վերանորոգվել է համայնքապետարանի տանիքը, Քարաշենում լուսավորության անցկացման համար փողոցներում արդեն հենասյուներ են տեղադրվել եւ այլն: Ն.Շադունցը նշեց, որ լուրջ ուշադրություն են դարձնում բնակավայրերում աղբահանության եւ սանմաքրման աշխատանքների իրականացմանը: *«Աշխատանքային պարտականություններիս անցնելու անմիջապես երկրորդ օրը զբաղվել եմ այդ հարցով: Մինչ խոշորացումն այս յոթ բնակավայրից վեցում գործում էին գյուղատնտեսական կոոպերատիվներ, որոնք ՕԻԳ-ի ծրագրի շրջանակներում տեխնիկա էին ձեռք բերել: Ներկայումս պայմանագիր ենք կնքել ու բյուջեից, չնայած որ սուղ են պայմանները, գումար ենք հատկացնում տվյալ բնակավայրում աղբահանության աշխատանքը կազմակերպելու համար»,* – նշեց համայնքապետը:

Դիտարկմանը, որ կարծես հանրապետությունում համայնքների խոշորացման գործընթացը հարթ չի ընթանում, Շադունցը պատասխանեց. *«Ժողովուրդը պետք է շոշափելի արդյունք տեսնի, քանի դեռ նա սեփական մաշկի վրա չի զգացել խոշորացման առավելությունը, նրան չես համոզի»:* Հավելելով նա տեղեկացրեց նաեւ, որ տարբեր ծրագրեր կիրականացվեն, որոնց արդյունքում քաղաքացին անպայման կզգա տարբերությունը:

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի միջոցով եւ Շվեյցարիայի զարգացման ու համագործակցության զարգացման գործակալության աջակցությամբ Տեղ խոշորացված համայնքում կիրականացվի 248,91 մլն դրամի ներդրում, որի շնորհիվ, ըստ նախապես ներկայացրած հայտի, համայնքը ձեռք կբերի համապատասխան տեխնիկա՝ աղբատար մեքենա, աղբամաններ, գրեյդեր, տեխսպասարկման մեքենա, միկրոավտոբուս, էքսկավատոր եւ այլն:

ՀՀ մշակույթի նախարարության աջակցությամբ իրականացվում է Տեղ բնակավայրում գտնվող Սբ Գեւորգ եկեղեցու վերանորոգումը: Ծրագրի իրականացման համար նախատեսվում է 90մլն ՀՀ դրամի ներդրում, որի շրջանակներում կիրականացվեն հուշարձանի ապամոնտաժման եւ վերակառուցման, եկեղեցու շրջակայքի բարեկարգման, դեպի եկեղեցի տանող ճանապարհների վերանորոգման աշխատանքներ:

Համայնքի զարգացման հնգամյա ծրագրում մանրամասն ներկայացվել են հետագա անելիքները, որոնցից հատկապես առանձնացրինք հետեւյալ կետերը՝ բազմավեկտոր գյուղատնտեսության զարգացում, համայնքի բնակավայրերում նախադպրոցական եւ արտադպրոցական ուսուցման կազմակերպում, տրանսպորտային հաղորդակցության համակարգի ստեղծում, բնակավայրերի կառուցապատում, բարեկարգում, կանաչապատում, սանիտարական մաքրում, աղբահանության իրականացում եւ գերեզմանատներին առնչվող խնդիրների կարգավորում, զբոսաշրջության խթանում, անասնապահության ոլորտում բարեփոխումների իրականացում, համայնքի ճանապարհների բարեկարգում, լուսավորության ցանցի ստեղծում եւ բարելավում, ոռոգման եւ խմելու ջրի ցանցերի կառուցում եւ բարեկարգում, երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումների իրականացում եւ այլն:

Ինչպես գրեթե բոլոր համայնքներում, այստեղ նույնպես չլուծված բազում խնդիրներ կան, որոնցից առաջնայինը Խանածախի խմելու ջրի հարցի լուծումն է: Ն.Շադունցի հավաստմամբ՝ հնարավոր բոլոր տարբերակները պետք է կիրառեն հարցին դրական լուծում տալու համար. *«Չգիտեմ՝ դա կլինի ՌԶԳ-ի, ՕԻԳ-ի, մարզպետարանի, համայնքի, թե բարերարի միջոցներով, բայց հարցը պետք է լուծվի: Եթե Խանածախում ջրի հարցը լուծենք, Կորնիձորում էլ լուսավորության հարցը պետք է լուծվի, մի համայնքում՝ գյուղամիջյան ճանապարհների վերանորոգման, խճապատման, մյուսում՝ գազիֆիկացման եւ այլ խնդիրներ կան: Մի խոսքով՝ յուրաքանչյուր բնակավայր իր խնդիրն ունի»:* Ի դեպ, Խոզնավար, Խանածախ եւ Վաղատուր գյուղերը գազիֆիկացվել են, բայց այնտեղ բաժանորդներ չկան: *«Մարդիկ կարծեք դեռ չեն հավատում, որ համայնքը գազիֆիկացվել է»,* – կեսկատակ-կեսելուրջ նշում է համայնքապետը եւ հավելում, որ համայնքային օբյեկտները գազիֆիկացնելու ուղղությամբ աշխատանքներ են իրականացնում, հուսով են՝ բնակիչներն էլ կհետեւեն այդ օրինակին եւ կօգտվեն կապույտ վառելիքից:

*«Չեմ կարող համայնքների խոշորացմանը միանշանակ դրական կամ բացասական պատասխան տալ, դա թողնենք ժամանակի հայեցողությունը: Բայց իմ սուբյեկտիվ կարծիքով, ճիշտ կլիներ Խանածախ, Խոզնավար եւ Վաղատուր համայնքները մեկ խոշորացված համայնք դարձնել: Չեմ ասի, թե յոթ բնակավայրի միավորումը մեկ համայնքում դժվարացրել է մեր աշխատանքի կազմակերպումը, ընդհակառակը, համայնքի զարգացման դրական տեղաշարժ արդեն իսկ նկատվում է: Հասցնում եմ լինել բոլոր բնակավայրերում, երեւի թե ամենաքիչ ժամանակը Տեղում եմ անցկացնում, որովհետեւ այստեղ աշխատակազմը կատարում է աշխատանքները»,* – նշեց Ն.Շադունցը:

Համայնքի խոշորացման հետեւանքով, սակայն, համայնքային բյուջեի ծեւավորման սկզբունքի ու ծավալի փոփոխություն տեղի չի ունեցել. եկամուտների զգալի մասը (շուրջ 70%) ձեւավորվում է պետբյուջեից համայնքին տրամադրվող ամենամյա դոտացիայից: Ուստի համայնքի եկամուտների փոփոխությունը մեծապես պայմանավորված է նշված դոտացիայի չափից: Հաշվի առնելով Արժույթի միջազգային հիմնադրամի կանխատեսումները Հայաստանի տնտեսական աճի վերաբերյալ (ՀՆԱ-ի աճը՝ 3.4% 2017թ. եւ 4% 2021թ.)՝ ակնկալվում է, որ պետական մակարդակով շոշափելի փոփոխություններ տեղի չեն ունենա դոտացիայի ավելացման առումով: *«Բյուջեի ծավալը կարող է փոխվել համայնքում գանձվող հարկերի չափի ավելացմամբ: Քանի որ մեր հնգամյա զարգացման ծրագիրը ներառում է նաեւ գույքի եւ հողի հարկերի գանձման արդյունավետության բարձրացման ռազմավարություն, ակնկալվում է, որ դրա շնորհիվ մոտակա հինգ տարվա ընթացքում համայնքի եկամուտները որոշակիորեն կավելանան»,* – նշեց համայնքապետը:

Հաշվի առնելով, որ 1999-2002թթ. Ներսես Շադունցն աշխատել է Տեղի գյուղապետ՝ փորձեցինք զուգահեռ անցկացնել այն տարիներին եւ ներկայումս իշխանության հանդեպ ժողովրդի վերաբերմունքի միջեւ: Նրա կարծիքով՝ այս ժամանակահատվածում շատ բան չի փոխվել, յուրաքանչյուրն զբաղված է իր աշխատանքով: Գյուղացին իրավունք չունի ասել, որ աշխատատեղ չկա գյուղում, նա ունի իր սեփականությունը, զբաղվում է գյուղատնտեսությամբ, այլ հարց է, թե արդյոք կարողանում է իրացնել իր արտադրանքը: *«Տարիներ շարունակ մեր պետական այրերը քարոզում էին գյուղացիներին ավելացնել մանր եղջերավոր անասունների քանակը, բայց այսօր գյուղացին կանգնել է իրացման լուրջ խնդրի առաջ: Եթե նախկինում Պարսկաստան էին տանում՝ գյուղացուց գնելով 40-45 հազար դրամով, ապա այսօր այլեւս անմիջապես գյուղացուց չեն գնում: Արդյունքում գյուղացին մանր եղջերավորի գլխաքանակն ավելացրել է, բայց դրա գինն է նվազել՝ հասնելով 20-23 հազար դրամի»,* – նշում է համայնքապետը եւ հավելում, որ ցանկալի կլինի, որ հատկապես մեր բանակը նախեւառաջ կերակրվի տեղական գյուղմթերքով: Ցավալի է նաեւ այն փաստը, որ այդ համայնքներում տարեկան 100-150 տոննա բուրդ են դեն նետում, ինչը նաեւ շրջակա միջավայրի աղտոտման պատճառ է դառնում: Ի դեպ, ըստ վիճակագրական տվյալների, Սյունիքի մարզում 120 հազար մանր եղջերավոր անասունից 50 հազարը միայն Տեղ համայնքում է: Կարեւոր է նաեւ այն հանգամանքը, որ հատկապես մենատնտեսների համար արոտավայրերի խնդիր չկա, օգտագործում են թե՛ գրավյալ տարածքների, թե՛ Գորայքի արոտավայրերը: Տեղում սեզոնին որոշակի խնդիր առաջանում է, բայց լուծելի է:

Շնորհիվ ժամանակին իրականացված որոշակի քաղաքականության այս բնակավայրերում նկատվում է աշխուժություն, որ հատկապես զգալի է երիտասարդների շրջանում: Այսօր Տեղ համայնքում փակ դուռ չկա, ավելին՝ Ներսես Շադունցի պնդմամբ՝ իր ղեկավարած համայնքից արտագաղթ չկա, ինչը ոգեւորիչ է:

Համայնքի խնդիրներից է նաեւ հատկապես երիտասարդների ազատ ժամանցի կազմակերպումը, Տեղում, Կորնիձորում, Քարաշենում մասամբ այդ հարցը լուծվել է, բայց Խոզնավարում, Խանածախում, Վաղատուրում, Արավուսում պատկերը տխուր է:

Նախադպրոցական ուսուցման կազմակերպման համար նախատեսվում է բնակավայրերում Տեղի մանկապարտեզին կից խմբակներ բացել. Քարաշենում դպրոցի վերանորոգումն ավարտելուց հետո, Խանածախում՝ ամենաուշը մարտ ամսին: Հանրակրթական դպրոցների աշակերտների թիվն ուսումնասիրելիս հաճելիորեն արձանագրեցինք, որ շատ համայնքների համեմատ, այստեղ պատկերն ավելի լավ է. Տեղի թիվ 1 միջնակարգ դպրոցում՝ 203 աշակերտ, Տեղի թիվ 2 միջնակարգ դպրոցում՝ 163, Քարաշենի միջնակարգ դպրոցում՝ 77, Կորնիձորի միջնակարգ դպրոցում՝ 159, Վաղատուրի միջնակարգ դպրոցում՝ 34, Խոզնավարի միջնակարգ դպրոցում՝ 34, Արավուսի տարրական դպրոցում՝ 11: Իհարկե, դպրոցները նախատեսված են ավելի շատ թվով աշակերտների համար, հուսանք՝ տարեցտարի ավելացում կլինի:

Համայնքների խոշորացումը մարդկանց մեկ այլ խնդրի առաջ էլ է կանգնեցնում, այն է՝ դարեր շարունակ տեղցի, կորնիձորցի, խանածախցի եւ այլ տեղացիները միավորվում եւ մեկ համայնքի բնակիչ են կոչվում: Չէ՞ որ չնայած միեւնույն տարածաշրջանի մարդիկ են, բայց յուրաքանչյուրն ունի իր հոգեկերտվածքը: *«Բնականաբար, նման խնդիր կա, բայց փորձում ենք մարդկանց շրջանում համայնքի համաչափ զարգացման գաղափարը տարածել, եւ ասեմ, որ կարծեք ստացվում է»,* – նշեց Ն.Շադունցը:

Երբ դեռ համայնքների խոշորացման հարցը քննարկման փուլում էր, մարդիկ մտավախություն ունեին, որ մեկ փաստաթղթի համար ինչպես են հասնելու համայնքի կենտրոն: Բայց այսօր այդ խնդիրն էլ լուծված է. բնակավայրերում լիազոր ներկայացուցիչները համակարգում են աշխատանքները: Կարճ ասած, նախկին համայնքի ղեկավարի լիազորությունները, բացի ֆինանսականից, վերապահվում են լիազոր ներկայացուցչին: Համայնքապետը խոստովանեց, որ որոշ հաստիքների կրճատում է կատարվել՝ գրադարանավար, հավաքարար, օպերատոր. մի խոսքով՝ հաստիքների մոտ 25 տոկոս կրճատում է տեղի ունեցել: Ի դեպ, գրադարանների առումով նա նշեց, որ համայնքի հատկապես որոշ գրադարաններ անմխիթար վիճակում են, եւ վտանգի տակ է այնտեղ գտնվող գրքերի հավաքածուն: *«Օրինակ՝ Խանածախի գրադարանի տանիքից, որտեղ պահվում է 7000 կտոր գիրք, թափվող ջուրը վատթար վիճակ էր այնտեղ ստեղծել: Այս պահին գրադարանավարի հաստիքը կրճատվել է: Տնտեսված միջոցներով վերանորոգել ենք գրադարանի տանիքը, փոխել ջրհորդանները, գարնանը կներկենք եւ հնարավորության դեպքում հաստիքը կվերականգնենք»,* – պարզաբանեց Շադունցը եւ հավելեց, որ գրադարանների հարցը քննարկման փուլում է:

Համայնքապետը նշեց նաեւ, որ ավագանին կայացած է, եւ նրա անդամները բավականին ակտիվ են. *«Ամեն հարց քննարկելիս վիճում ենք, բայց ուրախ եմ դրանով, քանի որ դրանից է ծնվում ճշմարտությունը»:* Ի դեպ, ավագանու կազմում երեք կին անդամ կա:

Համայնքի պատմամշակութային արժեքներից խոսելիս Ներսես Շադունցը նշեց, որ այստեղ լուծում պահանջող բազում հարցեր կան. *«Արժեքներ կան, որոնք պետք է պահպանել՝ Մելիք Հայկազն 2-րդի դամբարանը, Խանածախի անապատը, եկեղեցին եւ այլն, ինչը համայնքի միջոցներով հնարավոր չէ»:*

**ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

# Սիսիանը հիշում է մեծ զորավարին նաեւ մեր օրերում...

Երեք պատմություն Անդրանիկ Օզանյանի մասին

**ԾՈՎԻՆԱՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ**
Սիսիանի պատմության թանգարանի տնօրեն

**Զեր ցավը փանեմ, հասկացեք ինձ, իրար հասկացե՛ք...**

Ամուսնության ավանդույթ կա Սյունիքում. հարազատները եւ քավորը գնում են աղջիկ ուզելու: Իսկ աղջկան արդեն հավանած են լինում կամ տղայի մայրը, կամ ծնողները, կամ էլ տղան, եթե բախտը նրան ժպտար...

1918 թիվն է, կռիվ է Սյունիքում, հայոց աշխարհում: Էլ ո՞վ էր հիշում պսակի մասին, մանավանդ՝ ավանդույթի, հարսնախոսության: Բայց կյանքը սկսվում է ամեն օր՝ արեւի դուրս գալով, ողջ մնացած հայի աղոթքով, ով հավատում էր երկնային հոր հավերժությանն ու նրա արդար դատին: Բացառություն չէր նաեւ մեծ հայը՝ Անդրանիկ Օզանյանը: Նա ոչ միայն արեւի ծագելուն եւ Աստծո արդար գահին էր հավատում, այլեւ ի՛ր ազգի հավերժ գոյատեւմանը: Այդ ազգին էր նա ծառայեցրել իր ամբողջ կյանքը՝ նրա մի դառը կումն էլ ըմպելով Սիսիան-Անգեղակոթում՝ Սյունիքի հերոսական այդ գյուղում, որի բնիկները մի քանի հազար տարվա կյանքի շարունակողն են՝ սկսած Գոդեձորից մինչեւ Վասակ Սյունի, Իսրայել Օրուց մինչեւ Քեռի, Դրո, Անդրանիկ...

17 տարեկանում ամուսնացավ Անդրանիկ Օզանյանը: Մեկ տարեկանում մորից զրկված տղային ամուսնացրին հայրն ու ավագ քույրը՝ Նազլուն, որ նրա սիրտը լցվի ջերմությամբ, փառավորվի ընտանեկան սուրբ կյանքով: Բայց տարին նոր բոլորած՝ մահացավ Անդրանիկի կինը, ապա նորածին որդին: Նա մեծ զորավարի միակ ժառանգն էր այս հողի վրա: Թե զորավարը որքան ծանր է տարել իր որբ մանկությունը, ապա՝ կորուստներով լցված պատանեկությունն ու երիտասարդությունը, բոլոր հայերս գիտենք, քանզի ոչ մի հայ այնպես չի պաշտվել ժողովրդի կողմից, ինչպես Անդրանիկ Օզանյանը: XX դարի առաջին արյունոտ 20 տարին, որի գրեթե ամբողջ ընթացքում զորավարը թուրը չի դրել պատյան, թույլ չի տվել նրան խորանալ զգացմունքների մեջ, խորհել կին ունենալու եւ ընտանիք ստեղծելու մասին, թեեւ նրա ժամանակակից-մտերիմները նաեւ նման փաստեր են արձանագրել: Ռազմական գործի բերումով հաճախ կոպիտ ու կոշտ վարք դրսեւորելով հանդերձ, Անդրանիկը ժողովրդի մեջ՝ նրանց ուրախությունների եւ թշվառությունների պահերին, նրանցից մեկը մնաց՝ նույնքան պարզ, խորունկ, կարեկից, ընտանիք ու ժառանգություն ունենալու հայկական սուրբ

էջ 7

# Կառավարման համակարգի օպտիմալացման վերաբերյալ վարչապետի դիրքորոշումը տեղերում աղավաղվո՞ւմ է

**ՍՈՒՐԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

**«Այունյաց երկիր» մարզային թերթի 20.01.2017թ. թիվ 2 (420) համարում Կապանի քաղաքապետ Աշոտ Հայրապետյանի տարեկան հաշվետվության վերաբերյալ Արմինե Հարությունյանի հեղինակած նյութում ասված է. «Գաղտնիք չէ, որ հանրապետությունում սկսվել է հաստիքների կրճատման գործընթաց, ինչից անմասն չի մնացել նաեւ Կապան համայնքը: Քաղաքապետի տեղեկացմամբ՝ համայնքապետարանում եւ նրա ենթակա կառույցներում կկրճատվի մոտ 40-50 հաստիք»:**

Հայտնի է, որ ավելի քան ինը տարի է՝ մեր երկրի ամբողջ կառավարման համակարգը խոր ճգնաժամի մեջ է: Ինչպես կենտրոնական, այնպես էլ տեղական պետական մարմինները, դրանց ստորաբաժանումները եւ համայնքային հիմնարկները գործում են, մեղմ ասած, անարդյունավետ: Վաղուց խնդիր է առաջացել օպտիմալացնել դրանք, որպեսզի նկատելի արդյունքներ ստացվեն:

Հենց այդ նպատակով էլ մեր նոր կառավարության ղեկավարը՝ Կարեն Կարապետյանը, փորձում է անել դա, որը միանգամայն ողջունելի է: Ինչպես շատ-շատերին, այնպես էլ ինձ լավատեսական հույս է ներշնչում դա: Գործընթացը, մինչդեռ, բոլորովին էլ միտված չէ սոսկ հաստիքների ու աշխատատեղերի կրճատումների:

Փաստ է նաեւ, որ օպտիմալացում ասվածի ներքո հատկապես մարզերի կտրվածքով, ղեկավարները՝ գրեթե 100 տոկոսով, հասկանում են միայն աշխատատեղերի կրճատում: Այսպիսի մոտեցումը ոչ այլ ինչ է, քան կառավարման մարմինների գործունեության կատարելագործմանն ուղղված պետական քաղաքականության խեղաթյուրում, վարկաբեկում, վիժեցում: Մյուս կողմից, նման մոտեցումը դժգոհություն, հուսալքություն է առաջացնում հասարակության մեջ:

Օպտիմալացում արտահայտությունը ծագել է լատիներեն օպտիմուս բառից, որը հայերենում թարգմանվում է լավագույն: Այսինքն՝ օպտիմալացմամբ ուզում են լավացնել, արդյունավետ (հարգարժան վարչապետ Կ.Կարապետյանի ասած՝ էֆեկտիվ) դարձնել երկրի կառավարման համակարգի, հիմնարկների, կազմակերպությունների աշխատանքը:

Արդյո՞ք այդ լավացումը միայն աշխատողների թվի կրճատումների հաշվին կարող է կատարվել, թե՞ կան նաեւ այլ ուղիներ: Միանշանակ պետք է ընդգծել, որ այո՛, կան, այն էլ շատ, ու ավելի արդյունավետ, քան կրճատումներն են:

Կապանի քաղաքապետ Աշոտ Հայրապետյանը նոր տարվա նախօրյակին՝ դեկտեմբերի 29-ին, հայտարարել է, որ առաջիկա օրերին, թե շաբաթներին կամ ամիսներին կրճատելու է 40-50 աշխատող եւ հանգիստ գնացել իր տուն՝ Նոր տարի եւ Սուրբ ծնունդ նշելու:

Դրանով այդ օրերին նա լարված եւ մտահոգ վիճակ է ստեղծել քաղաքապետարանի եւ ենթակա բոլոր հիմնարկների, կազմակերպությունների կոլեկտիվներում, յուրաքանչյուր աշխատողի մեջ: Պետք է հասկանալ, որ օպտիմալացումն ինչ-որ արշավ չէ (ընտրությունների հանգույն), այլ անընդհատ գործընթաց, որը պետք է անել շատ զգույշ, պատճառաբանված, հիմնավոր ու առանց աղմուկի: Մինչդեռ ոչ միայն Կապանում, այլ ընդհանրապես մեր չինովնիկների ճնշող մեծամասնությունը տեսնելով, որ վարչապետը որոշ չաշխատող կառույցներ է վերացնում, ձախողված կադրեր ազատում, իրենք էլ տարիներով ժանգոտված թրերը հանել եւ սկսել են անկանոն աջ ու ձախ անել: Դե գիտեք, բութ գործիքի արածն էլ, աստված հեռու տանի, աղետալի է լինում՝ հատկապես, երբ առաջն առնող չի լինում...

Ինչ խոսք, կրճատումներով եւս կարելի է ինչ-որ չափով լավացնել այս կամ այն կառույցի աշխատանքը, սակայն այս պարագայում բոլորովին էլ վճռորոշ չի կարող լինել այն: Սա ավելի շատ պետք է դիտել որպես ճարահատյալ միջոց, նոր քաղաքականությանը համահունչ քայլելու պատրանք: Արդյունքում, շատ դեպքերում ժողովրդական առածում ասվածի նման է ստացվում՝ երբ հազիվհազ ծնված մեկի մարմնամասը գյորմամիշը կտրում եւ դեն է նետում՝ որպես ավելորդ մասի:

Օպտիմալացումը պետք է իրականացնել տվյալ պետական կամ տեղական միավորի ամբողջական կառուցվածքում՝ այդ թվում դրա ներքին ստորաբաժանումներում՝ ընդհուպ մինչեւ նրանց միջեւ անելիքների ճիշտ բաշխում եւ այլն, որով էլ մեծապես պայմանավորված է սպասվելիք վերջնական արդյունքի չափը: Ինչքան գիտականորեն ճիշտ եւ հիմնավորված լինի այդ օպտիմալացմամբ ուզում են լավացնել, արդյունավետ (հարգարժան վարչապետ Կ.Կարապետյանի ասած՝ էֆեկտիվ) դարձնել երկրի կառավարման համակարգի, հիմնարկների, կազմակերպությունների աշխատանքը:

Արդյո՞ք այդ լավացումը միայն աշխատողների թվի կրճատումների հաշվին կարող է կատարվել, թե՞ կան նաեւ այլ ուղիներ: Միանշանակ պետք է ընդգծել, որ այո՛, կան, այն էլ շատ, ու ավելի արդյունավետ, քան կրճատումներն են:

Կապանի քաղաքապետ Աշոտ Հայրապետյանը նոր տարվա նախօրյակին՝ դեկտեմբերի 29-ին, հայտարարել է, որ առաջիկա օրերին, թե շաբաթներին կամ ամիսներին կրճատելու է 40-50 աշխատող եւ հանգիստ գնացել իր տուն՝ Նոր տարի եւ Սուրբ ծնունդ նշելու:

Դրանով այդ օրերին նա լարված եւ մտահոգ վիճակ է ստեղծել քաղաքապետարանի եւ ենթակա բոլոր հիմնարկների, կազմակերպությունների կոլեկտիվներում, յուրաքանչյուր աշխատողի մեջ: Պետք է հասկանալ, որ օպտիմալացումն ինչ-որ արշավ չէ (ընտրությունների հանգույն), այլ անընդհատ գործընթաց, որը պետք է անել շատ զգույշ, պատճառաբանված, հիմնավոր ու առանց աղմուկի: Մինչդեռ ոչ միայն Կապանում, այլ ընդհանրապես մեր չինովնիկների ճնշող մեծամասնությունը տեսնելով, որ վարչապետը որոշ չաշխատող կառույցներ է վերացնում, ձախողված կադրեր ազատում, իրենք էլ տարիներով ժանգոտված թրերը հանել եւ սկսել են անկանոն աջ ու ձախ անել: Դե գիտեք, բութ գործիքի արածն էլ, աստված հեռու տանի, աղետալի է լինում՝ հատկապես, երբ առաջն առնող չի լինում...

Ինչ խոսք, կրճատումներով եւս կարելի է ինչ-որ չափով լավացնել այս կամ այն կառույցի աշխատանքը, սակայն այս պարագայում բոլորովին էլ վճռորոշ չի կարող լինել այն: Սա ավելի շատ պետք է դիտել որպես ճարահատյալ միջոց, նոր քաղաքականությանը համահունչ քայլելու պատրանք: Արդյունքում, շատ դեպքերում ժողովրդական առածում ասվածի նման է ստացվում՝ երբ հազիվհազ ծնված մեկի մարմնամասը գյորմամիշը կտրում եւ դեն է նետում՝ որպես ավելորդ մասի:

Օպտիմալացումը պետք է իրականացնել տվյալ պետական կամ տեղական միավորի ամբողջական կառուցվածքում՝ այդ թվում դրա ներքին ստորաբաժանումներում՝ ընդհուպ մինչեւ նրանց միջեւ անելիքների ճիշտ բաշխում եւ այլն, որով էլ մեծապես պայմանավորված է սպասվելիք վերջնական արդյունքի չափը: Ինչքան գիտականորեն ճիշտ եւ հիմնավորված լինի այդ քայլը, կառույցն այնքան արդյունավետ կգործի:

Մեր կարծիքով՝ հիմա հենց դրանով էլ զբաղված է Հայաստանի կառավարության նորանշանակ ղեկավարը: Վերջին ամիսներին նախարարություններ են լուծարվել, ԾԻԳ-եր եւ այլ կառույցներ փակվել, բայց դրանց կողքին ստեղծվել են այլ կառույցներ, որոնք նոր դիրքերից, այլ եղանակներով պետք է փորձեն ձախողված բնագավառներում գործերը կարգավորել: Կհաջողվի՞ նրանց, թե՞ ոչ, ժամանակի հարց է: Ըստ երեւույթին մի մասը քննություն կբռնի, մեկ այլ մասը՝ ոչ, եւ այդ մասով նորից միջոցներ պետք է ձեռնարկվեն: Սա բնականոն պետք է համարել: Կարեւորն այն է, որ չաշխատող ենթակառույցներն օր առաջ հայտնաբերվեն ու փոփոխվեն:

Մի խոսքով՝ քննվող գործընթացը միանգամայն սխալ է կրճատում կոչել: Ընդհանրապես: Սոցիալական ցանցերում երբեմն հանդիպում ենք կարծիքների, թե մեր վարչապետն այս ի՛նչ է անում. մի կողմից կրճատում է, մյուս կողմից՝ նոր կառույցներ ստեղծում: Այսպիսի քաղաքականությունը, իմ կարծիքով, պետք է ողջունել, քանզի միտված է, որքանով հասկանում եմ, ոսկե միջինը գտնելուն եւ իրոք աշխատող պետական մարմիններ ունենալուն, որ երկիրը կարողանա հաղթահարել ստեղծված ծանր վիճակը:

Որպեսզի ավելի ցայտուն լինի, որ օպտիմալացումը զուտ կրճատում չի ենթադրում, այլ ընդհակառակը՝ միջոցառումների մի ամբողջ համալիր, բերենք մի օրինակ:

Մի քանի տարի առաջ Հայաստանի ԱԻՆ նախարարությունը՝ իր կառուցվածքային ստորաբաժանումներով հանդերձ, տեխնիկական զինվածությամբ, գործելու ձեւերով ու եղանակներով, ֆինանսական միջոցներով եւ մյուս այլ հնարավորություններով շատ ավելի թույլ պետական կառույց էր, քան ներկայումս է: Ի՞նչ է կատարվել:

Հաշվի առնելով երկրի համար կառույցի կարեւոր դերը՝ նախարարությունում կատարվել է օպտիմալացում-լավացում: Ստեղծվել են արդյունավետ գործող անհրաժեշտ նոր ստորաբաժանումներ, ձեռք են բերվել արդիական տեխնիկական միջոցներ, սարքավորումներ, ավելացվել է աշխատակազմը՝ լուրջ տեղ հատկացնելով կադրերի ուսուցման ու որակավորման բարձրացմանը, զգալիորեն ավելացել են ֆինանսական ներդրումները: Կարծում եմ՝ համամիտ կլինեք, որ այս կառույցը, ի տարբերություն շատերի, հիմա ավելի արդյունավետ է գործում, եւ մեր բնակչությունը դժգոհ չէ նրանից:

Թվում է՝ մեր տեղական մարմինները եւս պետք է կառավարման գործում ղեկավարվեն ու աշխատեն այդպիսի մոտեցմամբ, որ հաջողեն ու մտքներից մեկընդմիշտ հեռացնեն «կրճատել» հասկացությունը եւ հնարավորինս քիչ օգտվեն դրանից: Հատկապես հիմա, երբ ընթանում է համայնքների խոշորացման գործընթաց, պետք է շատ ուշադիր կիրառել նշված լծակը:

Հարց է առաջանում՝ կրճատողներն արդյո՞ք տեղերում արել են համապատասխան ուսումնասիրություններ, վերլուծություններ եւ հանգել անհրաժեշտ եզրակացությունների, թե որն է պատճառը, որ տասնյակ տարիներ չեն լուծվում այս կամ այն հարցերը, ի՞նչ քայլեր են պետք, դրանց ենթակա կառույցները կամ ծառայությունները կարո՞ղ են արդյունավետ լինել, հարկ չկա՞ արդեն քննություն բռնած որեւէ մեկի փորձը ներդնել, որակավորված նոր մասնագետները, աշխատողները չէի՞ն շտկի վիճակը, ի՞նչ կտար կադրերի որակավորման բարձրացման կազմակերպումը եւ այլն:

Այդ ամենից հետո իրենց կհաջողվի՞ մշտապես թերակատարվող բյուջեի մուտքերի հավաքումը սահուն, լիարժեք եւ լիովին իրականացնել, գործող թափթփված բազարները վերափոխել մակարդակով սպասարկում իրականացնող շուկաների, շտկել առեւտրի ու սպասարկման, նաեւ մյուս ոլորտներում անթույլատրելի, հակահիգիենիկ վիճակները, բարելավել բնակավայրերի սանիտարիան, ջրամատակարարումը, կանխել կոյուղացանցերի խափանումները, աղբանոցներում կատարվող անասնամորթերը եւ էլի շատ բաներ:

Եթե նման խնդիրներ լուծելու նպատակով լրացուցիչ ստորաբաժանումներ ստեղծվեն, աշխատողներ ընդունվեն ու արդյունքում կարգավորեն թեկուզ խնդիրների մի մասը... Արդյո՞ք դա օպտիմալացում չէ: Հուսախաբ եմ անելու նրանց, ովքեր հույս ունեն, որ ակտիվ կրճատումներով կառավարության աչքին բարձր կերեւան: Հաստատ է, որ այնտեղ, առիթ լինելու դեպքում, ավելի շուտ հարցնելու են՝ ի՞նչ արդյունք ունեք, ինչպիսի՞ ծրագրեր ու թարմ նախաձեռնություններ, քանի՞ աշխատատեղ եք բացել եւ այդ ուղղությամբ ի՞նչ սպասելիքներ կան, քանիսո՞վ են ձեզ մոտ պակասել օտար ափեր մեկնողները, քանի՞ հարսանիք, ծնունդ եք գրանցել, դպրոցում քանի՞ աշակերտ է ավելացել եւ նմանատիպ այլ հարցեր:

Այսպիսով՝ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների օպտիմալացման առումով կարելի է հանգել հետեւյալին:

1. Երկրի կառավարությունից մինչեւ տեղական ինքնակառավարման մարմիններ՝դրանց ստորաբաժանումներով, ենթակա հիմնարկներով, կազմակերպություններով հանդերձ, իրենց առջեւ մշտապես վերափոխման, կատարելագործման եւ առաջադրվող պահանջներին համապատասխանելու խնդիր ունեն թե՛ կազմակերպական կառուցվածքի առումով, թե՛ աշխատակազմի ավելացման կամ պակասեցման, ինչպես եւ կառավարման գործում բարձր տեխնոլոգիաների կիրառման տեսակետից:
2. Օպտիմալացում-լավացումը պահանջում է բավարար ֆինանսական միջոցներ, որի ստեղծմանը պետք է ուղղված լինի ամբողջ կառավարման համակարգի ոչ միայն ուշադրությունը, այլ նաեւ միտքն ու հոգին: Այլ տեղերից միջոցներ սպասելը կործանարար է:
3. Օպտիմալացումը մշտական գործընթաց է, որ խնդիր ունի համապատասխան պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնին հասցնել այնպիսի հանգրվան, որ նա աշխատի առավել թափանցիկ, սահուն ու անկաշկանդ եւ ապահովի բարձր արդյունքներ: ■

# Գազի անվտանգ շահագործումը՝ առաջնային նպատակ

էջ 2

համար տարեկան մինչեւ 600 խորանարդ մետր բնական գազի 1 խորանարդ մետրի գինը սահմանվել է 100 դրամ: Երկրորդ խմբում ներառվել են այն քաղաքացիները, ովքեր ամսական սպառում են մինչեւ 10 հազար խորանարդ մետր՝ նախկինում գործող 146.7 դրամի փոխարեն վճարելով 139 դրամ: Երրորդ խմբում ամսական 10 հազար խմ եւ ավելի սպառում ունեցողներն են, որոնց համար 1 խորանարդ մետրի գինը 137 դրամի փոխարեն սահմանվել է 115.5 դրամ: Կառավարության որոշմամբ՝ տարբերակված մոտեցում է ցուցաբերվում նաեւ ջերմոցային եւ մի շարք վերամշակող ընկերությունների նկատմամբ՝ դրանց համար սահմանելով 102 դրամ սակագին:

> *Մարզի հիմնական խոշոր գազ սպառողներն են «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ, «Վայբլ» ՍՊ ընկերությունները, ավտոգազալիցքավորման ճնշակայանները, որոշակի տարեշրջանում՝ ջերմոցները, ասֆալտգործարանները (կանոնավոր աշխատելու դեպքում):*

ՀՀ կառավարության որոշմամբ սոցիալապես անապահով ընտանիքներ են համարվում ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված անապահովության «20.00» միավորից բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքները: «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Սյունիքի գազիֆիկացման եւ գազամատակարարման մասնաճյուղի տնօրեն Վահե Հակոբյանը տեղեկացրեց, որ Կապանում՝ 800, Գորիսում՝ 1100, Սիսիանում՝ 300, Քաջարանում՝ 46 սոցիալապես անապահով ընտանիք հունվարի 1-ից արդեն իսկ օգտվում է այդ արտոնությունից:

> *2016թ. նոյեմբերի 9-ից մասնաճյուղի տնօրեն նշանակված Վահե Հակոբյանը նշեց, որ նոր պաշտոնին հարմարվելու ժամանակաշրջանը հաղթահարվել է հեշտությամբ, որովհետեւ տասը տարուց ավելի աշխատել է այս համակարգում եւ այս կոլեկտիվի հետ:*

*«Արթուր Խաչատրյանից նորմալ ժառանգություն եմ ստացել, շարունակում ենք հիմնարկի զարգացումն ապահովել՝ հենվելով լավագույն ավանդույթների վրա»:*

Մասնաճյուղը շարունակում է ապահովել արդյունավետ, հուսալի ու անխափան գազամատակարարում եւ գազասպասարկում, կարգավորել մատակարար-բաժանորդ հարաբերությունները: *«Ներկայումս ընկերության ֆինանսական վիճակից ելնելով՝ նվազել է գազիֆիկացման աշխատանքների ծավալը, եւ մեր առաջնային նպատակը գազի անվտանգ շահագործումն է»,* – նշեց տնօրենն ու եւս մեկ անգամ բնակիչներին հորդորեց զգոն լինել, փոքր խնդրի, ազդանշանային սարքի զգուշացման դեպքում դիմել 1-04 անվճար վթարային ծառայություն: Վերջերս նույնպես թունավորման դեպք է արձանագրվել Կապանում՝ մարդածին գործոնով պայմանավորված: Չնայած բազում նախազգուշացումներին՝ մարդկանց մի խումբ շատ հաճախ անտեսում է գազի օգտագործման անվտանգության կանոնները:

Վ.Հակոբյանը նշեց նաեւ, որ այս տարվա հունվարին նախորդ տարվա հունվարի համեմատ գազ 20 տոկոսով ավելի է ծախսվել՝ պայմանավորված խստաշունչ ձմեռով:

Դեռ 2011թ. դեկտեմբերին Հայաստանի եւ Իրանի կառավարությունների միջեւ կնքված հուշագրի համաձայն՝ Թեհրանը տրամադրել էր 2 միլիոն ԱՄՆ դոլարի դրամաշնորհ՝ Իրանի հետ սահմանամերձ Մեղրիում ու Ագարակում գազի բաշխման ցանցի կառուցման համար: 2013-ին ավարտվել էին նախագծման աշխատանքները: 2016թ. դեկտեմբերի 21-ին տեղի ունեցավ Իրանի հետ սահմանամերձ Մեղրի եւ Ագարակ քաղաքներում կառուցված գազի բաշխման ցանցի պաշտոնական բացումը: Իրանի նախագահ Հասան Ռոհանիի Հայաստան կատարած այցի օրը վառվել էր խորհրդանշական կրակը եւ տրվել գազամատակարարման մեկնարկը: Գազի բաշխման ցանցի կառուցման աշխատանքներն իրականացրել է իրանական «Սաներջի» ընկերությունը, իսկ շինարարության վերահսկողությունը՝ «Գազպրոմ Արմենիա»-ն:

Ծրագրի շրջանակներում Մեղրիում անց է կացվել մոտ 26,5 կմ, իսկ Ագարակում՝ 4,8 կմ երկարությամբ տարբեր ճնշման գազատար: Մեղրի քաղաքի գազամատակարարումն ապահովելու նպատակով կառուցվել է եւս 1 կմ երկարությամբ բարձր ճնշման գազատար եւ գազաբաշխիչ կայան, որը նախատեսված է նաեւ քաղաքի հարակից բնակավայրերի գազամատակարարման համար: Արդյունքում, ինչպես տեղեկանում ենք ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների եւ բնական պաշարների նախարարության պաշտոնական հաղորդագրությունից, ամբողջությամբ գազիֆիկացվել է Մեղրի քաղաքը եւ Ագարակի մի մասը՝ մոտ 50 տոկոսը: *«Գազը հասել է տարածաշրջան, բայց, անվտանգության նկատառումներից ելնելով, դեռեւս չենք թույլատրում դրա շահագործումը: Փաստաթղթային որոշ աշխատանքների ավարտից հետո փաթեթն ամբողջովին կհանձնվի «Գազպրոմ Արմենիա»-ին, որից հետո կսկսվի շահագործումը: Համապատասխան տեղամաս, վթարային ծառայություն պետք է ստեղծվեն, շինհավաքակցման, ներտնային շինմոնտաժ եւ մի շարք այլ աշխատանքներ պետք է կատարվեն: Վստահ եմ՝ շուտով մեղրեցիներն արդեն լիարժեք կօգտագործեն կապույտ վառելիքը»,* – նշեց մասնաճյուղի տնօրենը:

Մարզի որոշ համայնքների տարածքով անցնում է իրանական գազատարը, բայց այնտեղ գազիֆիկացումը որպես իրականություն տեսնելը հեռավոր, ինչ-որ առումով նաեւ անիրականանալի երազանք է թվում գյուղացիների համար: Հասկանալի է, որ «Գազպրոմ»-ը շահույթ հետապնդող ընկերություն է, եւ սակավաթիվ բնակչություն ունեցող համայնքներում գազիֆիկացումը՝ ոչ շահավետ, բայց հատկապես սահմանամերձ գյուղերում կարեւոր է այդ հարցի լուծումը: *«Որպես սյունեցի՝ նշեմ, որ ինձ համար նույնպես այդ համայնքների գազիֆիկացումը ցանկալի է ու անհրաժեշտ, բայց, ինչպես նշեցի, մեր ընկերությունը նվազեցրել է գազիֆիկացման աշխատանքների ծավալը: Այդ գործը, կարծում եմ, հնարավոր է իրականություն դարձնել պետության, բարերարների, համայնքի ունեւոր մարդկանց, տարբեր կազմակերպությունների միջոցով: Համոզված եմ՝ այդ դեպքում «Գազպրոմ»-ը նույնպես որոշակի ներդրում կկատարի»,* – նշեց Վահե Հակոբյանը եւ հավելեց՝ թեեւ ընկերության 2017թ. ծրագրի նախնական տվյալներով Սյունիքից ոչ մի համայնք գազիֆիկացման ցանկում չի ընդգրկվել:

Մասնաճյուղի տնօրենի տեղեկացմամբ՝ 2014թ. հունվարի 6-ից «Հայռուսգազարդ» ՓԲԸ-ի «Գազպրոմ Արմենիա» դառնալով (մեր հանրապետության ունեցած 20% բաժնեմասը («Հայռուսգազարդ»-ի) Ռուսաստանի Դաշնությանը վաճառելով) բավականաչափ աշխատանքներ են իրականացվել՝ սկսած մեքենա-սարքավորումների պարկի արդիականացումից ընդհուպ մինչեւ պարգեւավճարների ավելացում: «Գազպրոմ»-ը համաշխարհային մասշտաբով նշանավոր ընկերություններից է, հետեւաբար աշխատելաոճը, ներկայացվող պահանջները, ընդհանուր համակարգը նույնպես այլ են: Կարեւոր է նաեւ աշխատակիցների սոցիալական պաշտպանվածության բարձր մակարդակը: Տնօրենը հավաստիացրեց, որ հաստիքների կրճատում չի նախատեսվում:

Ի դեպ, վերջերս տարածայնություններ են առաջացել Ռուսաստանի եւ Վրաստանի միջեւ կնքվող պայմանագրի շուրջ եւ հավանական է, որ Վրաստանը Հայաստանին այլեւս գազ չմատակարարի այդ խողովակաշարով: Արդյո՞ք դա լրացուցիչ խնդիրներ չի ստեղծի: *«Սա միջպետական խնդիր է եւ չշտապենք եզրակացություններ անել, բայց իրանական գազը նույնպես թե՛ կալորիականության, թե՛ ճնշման եւ ջերմատվության եւ մյուս բոլոր հատկանիշներով լիովին բավարար է նորմալ գազամատակարարում ապահովելու համար»,* – նշեց մասնաճյուղի տնօրենը:

**ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

# Ինչու էր 1988-ի փետրվարին փոթորկվել Բաքուն

**ՀԵՆՋԵԼ ԱՌԱՔԵԼՅԱՆ**

էջ 1

խիջեւանում այդ օրերին մնացել էին հայերով բնակեցված մի քանի բնակավայր՝ Ագուլիս, Կզնութ, Ցղնա, Բիստ, Գյումրի, Նորս, Ապրակունիս, Զնաբերդը, որոնք ամբողջովին դատարկվեցին 1988-90 թվականներին): Այս ամենի համար նրանք արդեն բացահայտ կերպով մեղադրում էին նաեւ մարզկոմի առաջին քարտուղար Բորիս Կեւորկովին: Հիշում եմ նույն Վաչագան Գրիգորյանի խոսքը.

*– Նա Ադրբեջանի հնազանդ կամակատարն է մարզում: Մի երկու օր առաջ մտել եմ նրա մոտ եւ ուղղակիորեն հիշեցրել, որ ճիշտը մարզից հեռանալն է:*

Վաչագան Գրիգորյանին ճանաչում էի վաղուց: 1984 թվականին Սիսիանում երաշտ էր: Անասնակերը չէր բավականացնում: Նա, ինչպես նաեւ մարզգործկոմի նախագահի տեղակալ եւ ագրոարդի նախագահ Շնավոն Պետրոսյանը նախաձեռնեցին շրջանին կերով օգնելու գործը: Կերը բերվում էր մեծ մասամբ Ասկերանի շրջանից, որտեղ աշխատում էր Վաչագան Գրիգորյանը: Այն ժամանակ ես կուսշրջկոմի երկրորդ քարտուղարն էի եւ ինձ էր հանձնարարված կերերի փոխադրման գործի կազմակերպումը:

Շատ անգամ եմ հանդիպել նրան՝ այդ ջերմ, իսկական հայրենասեր մարդուն: Ցավով էր խոսում Բաքվի հայատյաց քաղաքականության մասին: Մի օր առաջարկեց շրջկենտրոնի գրախանութ իջնել:

*– Տեսնում ես, ամբողջն ադրբեջաներեն գրքեր են, հայկական այն մի քանի կտոր գրականությունն էլ ես եմ Հայաստանից բերել, - ցավով ասաց նա:*

...Զգացվում էր, որ մարդկանց համբերությանն այլեւս տեղ չէր մնացել: Շշուկներ կային նույնիսկ, որ ստորագրություններ են հավաքվում մարզն Ադրբեջանի կազմից հանելու մասին: Հաջորդ օրը խոսակցության թեման նույնն էր. մարզը, նրա ճակատագիրը: Կեսօրն անց էր, երբ հրաժեշտ տվեցինք ղարաբաղցի ընկերներին, Ստեփանակերտին: Արտաքնապես քաղաքը հանգիստ էր: Սակայն իր ընդերքում կամաց - կամաց խմորվող փոթորիկն իրեն արդեն զգալ տալիս էր:

…1988 թվականի հունվարի կեսերին մեկնեցի Բաքու: Սովորում էի ԽՄԿԿ Կենտկոմին առընթեր Բաքվի բարձրագույն քառամյա դպրոցի հեռակա բաժնում: Վերջին տարին էր: Արդեն հանձնում էինք պետական քննությունները: Մեր կուրսում ընդգրկված էին Անդրկովկասյան երեք հանրապետության կուսակցական, խորհրդային աշխատողներ, ինչպես նաեւ՝ զինվորականներ, ովքեր խորհրդային բանակում զբաղվում էին քաղդաստիարակչական աշխատանքի հարցերով: Հայաստանից 9 հոգի էինք: Մինչեւ փետրվարի կեսերը Բաքուն հանգիստ էր: Համենայն դեպս արտաքնապես անսովոր ոչինչ չէր զգացվում:

Փետրվարի սկզբներին Հայաստանից տասնօրյա վերապատրաստման դասընթացների եկան նաեւ մի խումբ կուսակցական եւ խորհրդային ղեկավար աշխատողներ: Նրանց թվում էր նաեւ Սիսիանի կուսշրջկոմի առաջին քարտուղար Շչորս Դավթյանը: Երբեմն հյուրանոց մեզ այցելության էին գալիս ծագումով սիսիանցի եւ արդեն Բաքվում պաշտոններ զբաղեցնող ադրբեջանցիներ: Նրանցից ոմանց գիտեի ավելի վաղ: Նորմալ մարդկային հարաբերություններ կային: Սակայն այս անգամ ընդգծված սառնությանը զուգահեռ, նրանք ըմբոստ կեցվածք էին ընդունել: Այդ ըմբոստություն-սառնությունը մեծանում էր Ստեփանակերտում ծավալվող խմորումների մեծացման հետ մեկտեղ: Իսկ Ստեփանակերտում կատարվող իրադարձությունների մասին լուրերը մեզ էր հասցնում մարզկոմի գյուղբաժնի վարիչի տեղակալ, մեր համակուրսեցի Սարուխան Բեդունցը: Մի օր նա հայտնեց, թե նախապատրաստվում է պատգամավորների մարզային խորհրդի նիստ, որտեղ դրվելու է մարզն Ադրբեջանի կազմից հանելու եւ մայր հայրենիքի հետ միավորվելու հարցը: Այդ լուրն արդեն ըստ երեւույթի հասել էր Բաքու: Ղարաբաղցիները հավատացել էին Գորբաչովյան վերակառուցմանը, հավատացել էին, որ ահա եկել է պահը՝ ազատորեն ինքնորոշվելու համար: Միամտորեն հավատացել էինք շատերս: Նույն օրերին Բաքվում վերապատրաստման եկած Գորիսի կուսշրջկոմի առաջին քարտուղար Ռոբերտ Ալեքսանյանը մի օր ուղղակիորեն ասաց.

*– Հավաստի աղբյուրներից գիտեմ. Ղարաբաղի հարցը լուծվում է:*

... Մարզխորհրդի նիստից մեկ օր առաջ՝ փետրվարի 19-ին, Բաքուն փոթորկվել էր: Առավոտյան հյուրանոցից դուրս գալիս կենտրոնական հրապարակի մյուս ծայրում մարդկային մի անկազմակերպ ամբոխ տեսա: Շուտով շարասյան գլուխը կանգ առավ հրապարակի կենտրոնում, իսկ մարմինը կամաց-կամաց փաթաթվեց եւ օղակեց Լենինի արձանն ու հրապարակի մի զգալի հատվածը: Ցուցարարներն ադրբեջաներեն եւ ռուսերեն լեզուներով կրում էին «Մահ Աղանբեկյանին», «Մահ Դեմիրճյանին», «Ղարաբաղը մեր հողն է» պաստառները: Սա արդեն լուրջ մարտահրավեր էր, առաջին մահ ազդարարող դեռեւս ազդագրերը: Ամեն ինչ պարզ էր: Տարիներ շարունակ թաքուն պահված մաղձն ու թշնամանքը վերջապես բացահայտ ցուցադրվում էին: Հռետորները խոսում էին ադրբեջաներեն: Շատ բան անհասկանալի էր: Բայց միանգամայն հասկանալի էր «Ղարաբաղը մեր հողն է» արտահայտությունը, որ հնչում էր իրար փոխարինող հռետորների բերանից:

... Կուսդպրոցում դասերն ընդհատվել էին: Քիչ հետո փակվեցին նաեւ դպրոցի դռները: Հայերին խորհուրդ տվեցին մնալ դպրոցում, դուրս չգալ: Վրացիներն ու ադրբեջանցիները դուրս եկան: Մինչեւ ուշ երեկո դպրոցի ներսում էինք: Լուսամուտից պարզ երեւում էր, թե հարակից փողոցներով ամբոխն ինչպես է աճապարում, այս անգամ ոչ թե կենտրոնական հրապարակ, այլ՝ կուսակցության կենտրոնական կոմիտեի շենք: Կենտկոմի շենքը կուսդպրոցից քիչ էր հեռու: Շատերն ուղղակիորեն վազում էին: Այդ պահը նման էր «Յուսիսային ծիածան» կինոնկարի

## «Գորիսի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի խորհրդի կազմը հաստատելու եւ Հայաստանի Հանրապետության վարչապետի 2011 թվականի հունիսի 15-ի N 551-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին

**«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածին եւ Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 23-ի N 975-Ն որոշման հավելվածի 8-րդ կետին համապատասխան՝**

1. Հաստատել «Գորիսի պետական համալսարան» պետական ոչ առեւտրային կազմակերպության խորհրդի կազմը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության վարչապետի 2011 թվականի հունիսի 15-ի «Գորիսի պետական համալսարան» պետական ոչ առեւտրային կազմակերպության խորհրդի կազմը հաստատելու եւ Հայաստանի Հանրապետության վարչապետի 2006 թվականի հունիսի 8-ի N 405-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 551 - Ա որոշումը:

**e-gov.am**
**3 փետրվար 2017**

### «Գորիսի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի խորհրդի կազմը

Հիմնադրի անունից առաջադրված խորհրդի անդամներ

**Վ.Հակոբյան** - ՀՀ Սյունիքի մարզպետ
**Մ.Մկրտչյան** - ՀՀ կրթության եւ գիտության նախարարի տեղակալ
**Վ.Ադունց** - ՀՀ Գորիսի քաղաքապետ (համաձայնությամբ)
**Ս.Սիմոնյան** - ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության պետի տեղակալ
**Լ.Սարգսյան** - «Փյունիկ» հիմնադրամի նախագահ (համաձայնությամբ)
**Ս.Խաչատրյան** - «Երեւանի ՋԷԿ» ՓԲԸ-ի տնօրեն (համաձայնությամբ)

### Լիազոր մարմնի կողմից առաջադրված խորհրդի անդամներ

**Կ.Մովսիսյան** - Գորիսի Ա.Բակունցի անվան թիվ 1 ավագ դպրոցի տնօրեն (համաձայնությամբ)
**Ն.Ղուկասյան** - «Կրթության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի տնօրեն (համաձայնությամբ)
**Ս.Աղբալյան** - Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի մետալուրգիայի եւ նյութագիտության ամբիոնի պրոֆեսոր (համաձայնությամբ)
**Հ.Պետրոսյան** - Երեւանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի մանկավարժության եւ օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի պրոֆեսոր (համաձայնությամբ)
**Հ.Ալեքսանյան** - ՀՀ Սյունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի եւ սպորտի վարչության պետ (համաձայնությամբ)
**Ս.Հակոբյան** - «Հայկ-ԺՈՍ» ՍՊԸ-ի գործադիր տնօրեն (համաձայնությամբ)

### Պրոֆեսորադասախոսական կազմից ընտրված խորհրդի անդամներ

**Զ.Գրիգորյան** - Գորիսի պետական համալսարանի ուսումնական ծրագրերի եւ ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտոր
**Ա.Դինգչյան** - Գորիսի պետական համալսարանի ճարտարագիտության եւ տնտեսագիտության ֆակուլտետի դեկան
**Թ.Մարության** - Գորիսի պետական համալսարանի հումանիտար եւ հասարակագիտական մասնագիտությունների ֆակուլտետի դեկան
**Ա.Դինունց** - Գորիսի պետական համալսարանի բնագիտական մասնագիտությունների ֆակուլտետի դեկան
**Ս.Հայրապետյան** - Գորիսի պետական համալսարանի միջազգային համագործակցության եւ կրթության որակի ապահովման բաժնի ղեկավար
**Ռ.Վարդանյան** - Գորիսի պետական համալսարանի կենսաբանության եւ քիմիայի ամբիոնի պրոֆեսոր

### Ուսանողության կողմից ընտրված խորհրդի անդամներ

**Ա.Անդրիյան** - Գորիսի պետական համալսարանի մաթեմատիկայի բաժնի 4-րդ կուրսի ուսանող
**Բ.Պետրոսյան** - Գորիսի պետական համալսարանի կենսաբանության բաժնի 2-րդ կուրսի ուսանող
**Ն.Առուստամյան** - Գորիսի պետական համալսարանի ձեռնարկությունների տնտեսագիտություն եւ կառավարում բաժնի 2-րդ կուրսի ուսանող
**Գ.Շալունց** - Գորիսի պետական համալսարանի էլեկտրոնիկայի բաժնի 3-րդ կուրսի ուսանող
**Մ.Իվանյան** - Գորիսի պետական համալսարանի հայոց լեզու եւ գրականության բաժնի 3-րդ կուրսի ուսանող
**Մ.Թեւոսյան** - Գորիսի պետական համալսարանի պատմության բաժնի 2-րդ կուրսի ուսանող

**Դ.Հարությունյան**
Հայաստանի Հարապետության կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար

# Սիսիանը հիշում է մեծ զորավարին նաեւ մեր օրերում...

էջ 5

ավանդույթների մոլի կողմնակից:

Հայտնի է, որ 1918թ. օգոստոսին Անդրանիկն իր զորքով եւ գաղթականությամբ հանգրվան գտավ Սիսիանում՝ նախօրոք ստանալով տեղի ոչ միայն զինվորականության ու ղեկավարների, այլեւ առաջին հերթին ժողովրդի համաձայնությունը: Ի՞նչ ամիս էր օգոստոսը Սիսիանում: Բերքն առատ, արտերը ցորենով լիքը: Անդրանիկն իր զորքով մաքրել-ազատել էր թաթարներից Սիսիանի յոթ խոշոր բնակավայր եւ դրանում տնավորել գաղթականությանը: Արտերում հունձ էր, բերքը բաշխում-տեղավորում էին, հաշվում մի քանի ամսվա պաշարի քանակը: Անդրանիկը եւս մասնակցում էր հնձին:

Հացը երբեք շատ չի լինում, բայց գալիքն էլ էր դժվար. ով գիտի՝ աշնանացան կարվի՞ եւ կհնձե՞ն արդյոք նոր բերքը: Վախերը շատ էին. պատերազմ էր ու կոտորած: Անդրանիկն ամբողջ պարենի վերահսկում- բաշխումը վստահել էր իր հետ Անգեղակոթ մտած Սոսե մայրիկին. միակ մարդն աշխարհում, որին աներկբա ունկ էր դնում:

- Լսել եմ անգեղակոթցիներից, որ Անդրանիկը հենց այդ ժամանակ, աշնան դեմ, որոշեց ջահելներին ամուսնացնել, - մի գեղեցիկ օր, երբ հարազատ մարդկանց հետ նշում էինք իմ թոռնիկ Տարոնի տարեդարձը, ինձ դիմեց ամուսնուս ազգի սիրելի փեսա Վարդան Գալստյանը: Վարդանը շինարար է, ծագումով գորիսեցի, ձեռքը հազար տեղ մաշած տղամարդ:

Զարմանք-ուրախություն խառնվեց իրար: Այսքան տարի, Անդրանիկի մասին պատմություններ որոնելուս ճանապարհին, այդ մասին չէի լսել, թեեւ Սիսիանից գնալուց 100 տարի հետո էլ, այս ժողովուրդը հիշում է նրան ու պատմում՝ «Փաշեն էկավ, Փաշեն կնաց, Փաշեն ասավ… »:

- Չեմ լսել, - ասում եմ, ու Վարդանը սկսում է պատմել՝

- Դե կռիվ, արյուն, սուգ: Ո՞ւմ մտքով կանցներ՝ ոչ ահելների եւ ոչ էլ ջահելների, խոսել պսակվելուց: Ո՞վ կաներ դա. բոլոր ընտանիքները կիսատ-պռատ, խնամախոսներ-քավորներ չկային, աղջիկ-տղա իրարից մի տեսակ հեռու-օտար. սիրո սիրտ չկար: Բայց դե կյանքը գետ է, պիտի հոսի, պիտի գնա…

Անդրանիկն ասել էր՝ «Էս հայություն ի՞նչ, պիտի վերանա՞: Է՜, թուրքի ուզածն ի՞նչ է…. Ջահելներին պիտի պսակենք»: Ասում են նաեւ, որ հավաքել էր իր շուրջը բոլորին՝ տեղի ջահելներին, իր հետ եկածներին, զրուցել-զրուցել էր, ապա խորհուրդ տվել՝ «Ամուսնանալն էլ պարտք է ազգի առաջ. հայություն չի կարող մեռնել. հայության ծառը պիտի ճյուղ տա, պտղվի: Էդ ծառը հիմա դուք եք: Հավանեք իրար, հարմարվեք, զույգեր կազմեք: Ես ձեզ ծնող, հարսնախոս, քավոր ու քահանա: Ես ձեզ պսակող»:

Հրաշք էր: Աստված իջել էր, կանգնել Սյունյաց հողին: Աստված Անդրանիկի մեջ էր: Ապա տարել, տեղավորել էր նոր պսակվածներին Շաքե գյուղում, ուր ակունքներն են Շաքե գետի, ուր հազար տարվա ջրաղացն էր՝ երկու քարով, Շաքեի

էջ 8

այն դրվագին, երբ սովալլուկ ու տկլոր ամբոխը մուսուլմանական մոլեռանդությամբ վազում էր Թեհրանում գտնվող ռուսական դեսպանատուն՝ արյուն հեղելու անհագուրդ ծարավով լի: Կուսդպրոցի հեռակա ուսուցման գծով պրոռեկտոր Նիկոլայ Դավթյանը մի բարի եւ ազնիվ մարդ էր՝ ծագումով ղարաբաղցի: Մեզ հավաքել էր իր աշխատասենյակ եւ ուշադիր լսում էր ելույթները: Արդեն հնչում էին նաեւ առաջին բռնության կոչերը: Նրա ծերունական գունատ դեմքի վրա կարդացվում էր վերահաս վտանգի տագնապը, այդ ժամանակ Բաքվում ապրող 300 հազար հայի ճակատագրի նկատմամբ ունեցած անհանգստությունը: (Ի դեպ 1990 թվականի հունվարին Բաքվում կատարված հայերի ջարդից հետո նա իր մի քանի բարեկամների ուղարկել էր Սիսիան եւ գրությամբ խնդրել տեղավորել ու տնավորել նրանց: Նրա խնդրանքն, իհարկե, կատարվեց եւ բոլորն էլ տեղավորվեցին Շաքե գյուղում): Միտինգի ավարտից հետո նա ասաց, որ վերջին ելույթ ունեցողը Կենտկոմի գյուղատնտեսության գծով քարտուղարն էր, որ նա հայտարարեց, թե հանրապետության ղեկավարները խոսել են Մոսկվայի հետ, որ Ղարաբաղի անջատման ոչ մի հարց չի եղել եւ չի լինի, որ այն եղել եւ մնում է որպես Ադրբեջանի անբաժանելի մասը: Դրանից հետո ամբոխն աստիճանաբար սկսեց քաշվել: Բարի գիշեր մաղթելուց հետո նա դանդաղ հետ շրջվեց եւ ավելացրեց.

*– Այսօր ռեկտորատում շշուկներ հասան ականջիս, որ վաղը Կենտկոմի առաջին քարտուղար Բաղիրովը մի քանի ղեկավար աշխատողների հետ մեկնում է Ստեփանակերտ:*

Թեեւ այդ հրատապ այցի մասին նա հստակ ոչինչ չգիտեր, սակայն կարծում էր, որ այն կարող էր կապված լինել Ղարաբաղում իրավիճակի սրման հետ:

Փետրվարի 20-ին Բաքվի փոթորիկը մարել էր: Սակայն լուրեր էին պտտվում, որ ավելի հուժկու փոթորիկ բարձրացել է Ղարաբաղում:

Փետրվարի 21-ին Բեդունցը դպրոց չէր եկել: Մեր համակուրսեցիներ՝ ծագումով կապանցի ՀԿԿ Կենտկոմի հրահանգիչ Սամվել Մարտիրոսյանի եւ ռազմածովային նավատորմի երրորդ կարգի կապիտան Ռազմիկ Ավանեսովի հետ մենք նրան գտանք դպրոցի հանրակացարանում: Ուրախությունից աչքերը փայլում էին:

*– Ղարաբաղն անջատվել է Ադրբեջանից,* - ասաց նա: Ու հետո հավաքելով իրեն պատմեց հետեւյալը:

*– Բաքվաբնակ բարեկամիս տնից գիշերը կոդով խոսել եմ քրոջս հետ: Նա մարզային խորհրդի պատգամավոր է: Ասաց, որ տեղի է ունեցել ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորների խորհրդի արտահերթ նստաշրջան եւ որոշում է կայացվել դուրս գալ Ադրբեջանի կազմից եւ միավորվել մայր հայրենիքի հետ:*

Հետո նա նշեց, որ մարզխորհրդի նիստը ձախողելու նպատակով մի շարք արհեստական արգելքներ են ստեղծվել, որ ադրբեջանցի պատգամավորները բոյկոտել են նիստը, որ նույնիսկ փակվել են Ստեփանակերտ մտնող բոլոր ճանապարհները, որպեսզի պատգամավորները չկարողանան մասնակցել նստաշրջանին, որ շատերը ստիպված անտառներով ու սարերով են ոտքով մտել քաղաք, որ ոչ մի արդյունք չեն տվել անգամ նստաշրջանը ձախողելու նպատակով այդ օրը Ստեփանակերտ ժամանած Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Բաղիրովի հորդորները: Իսկ թե ինչու էր հատկապես փետրվարի 19-ին եւ ոչ 20-ին մեծ աղմուկ բարձրացել Բաքվում, դա ըստ էության կապված էր այդ օրը մարզի շրջաններում տեղի ունեցող շրջխորհուրդների նստաշրջանների հետ, որոնցում ընդունված որոշումներով պահանջվում էր հրավիրել մարզխորհրդի արտահերթ նստաշրջան եւ քննարկել մարզի հետագա ճակատագրի հարցը:

...Թեեւ փետրվարի 21-ի ԽՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոյի կողմից ղարաբաղյան շարժումը մի խումբ ծայրահեղականների գործ որակվելուց հետո Բաքվում միտինգները դադարեցին, սակայն արդեն ամենուրեք գործադուլի կոչեր էին հնչում: Մի օր Նիկոլայ Դավթյանը կամացուկ ասաց.

*– Հավաստի աղբյուրից ինձ հայտնի է, որ այս ամենը կազմակերպում է հենց Կենտկոմը: Ուղղակի վերեւից հանձնարարություն կա փակել հիմնարկ-ձեռնարկությունները, գործադուլի դուրս գալ: Ուզում են Մոսկվային վախեցնել:*

Հայերի համար արդեն փողոց դուրս գալը վտանգավոր էր: Մթնոլորտն աստիճանաբար փոխվում էր, դառնում առավել թշնամական եւ չարացած: Չգիտեինք նաեւ, որ արդեն օրակարգում է այդ պատմական որոշման պատասխանը՝ Սումգայիթի հայ բնակչության եղեռնը: Բայց ասեմ նաեւ, որ ծայրահեղորեն տրամադրված ամբոխի կողքին կային բազմաթիվ մարդիկ, ովքեր անտարբեր էին այս ամենի նկատմամբ, անգամ ղարաբաղցիների՝ առանձին ապրելու ձգտումը համարում էին հենց ղարաբաղցիների գործը: Իմիջայլոց այս հարցի նկատմամբ քարոզություն էր տիրում նաեւ կուսդպրոցում: Թե դպրոցի ղեկավարությունը, եւ թե ադրբեջանցի ուսանողներն ու դասախոսները ձեռնպահ էին մնում այդ հարցի հրապարակային քննարկումներից:

...Ավարտական դիպլոմները հանձնելու հաջորդ օրը՝փետրվարի 26-ին, անվտանգության կոմիտեի երկու աշխատակցի ուղեկցությամբ մեզ ճանապարհեցին օդանավակայան: Այստեղ առաջարկեցին լսել Գորբաչովի դիմումը՝ ուղղված հայ եւ ադրբեջանցի ժողովուրդներին: Ելույթը պետք է հեռուստատեսությամբ հնչեր տեղական ժամանակով ժամը 12-ին: Թռիչքը մեկ ժամ հետաձգվեց: Հեռուստաելույթի մեջ գլխավոր քարտուղարը երկու ժողովուրդներին կոչ էր անում հանդես բերել հանդարտություն եւ զսպվածություն: Սակայն այդ կոչը նմանվեց գելի գլխին ավետարան կարդալու պես մի բանի, քանի որ հեռուստաելույթի հենց հաջորդ օրը սկսվեց Սումգայիթի հայերի ջարդը: Դա մի փորձ էր հայերին ահաբեկելու միջոցով կասեցնել սկսված շարժումը: Մինչդեռ դրանից հետո այն նոր թափ ու երանգ ստացավ, բայց եւ բարձրացավ ադրբեջանահայերի բռնի տեղահանության ալիքը: (Սումգայիթից հետո Սիսիանը նույնպես իր հերթին սկսեց ընդունել հայ առաջին փախստականներին, որոնց թիվն արդեն 1990-ին հասավ շուրջ 4000-ի, որոնք հիմնականում տեղավորվեցին Սիսիանում, Դաստակերտում, Շաքեում, Որոտանում, Աղիտուում, Վաղատնիում, Իշխանասարում, Տորոնիքում):

...Նույն օրը կեսօրն անց էր, երբ հասանք Երեւան: Թատերական հրապարակում բազմահազարանոց միտինգ էր: Ոչ միայն լցվել էր հրապարակը, այլեւ մարդկային հոծ շղթան ձգվել ու տարածվել էր հարակից փողոցներով մեկ: Հռետորներն արտահայտվում էին զուսպ, հավասարակշռված: Բոլորի ելույթների հենքը ղարաբաղյան հիմնախնդրի արդարացի լուծման պահանջն էր, ազգերի ինքնորոշման իրավունքի իրացումը: Պաստառների վրա երեւում էր անգամ «Լենին, պարտիա, Գորբաչով» կարգախոսը:

...Անցել են տարիներ, բայց ոչինչ չի մոռացվել: Արցախի տարեգրության մեջ 29 տարի առաջ ոսկե տառերով դաջված 1988 թվականի փետրվարի 20-ի մարզխորհրդի համարձակ որոշումն այսօրվա արդեն կայացած Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության պայքարի առաջին էջն էր, իրավական գործընթացի սկիզբը:

Այսքան լարվածություն ստեղծելու փոխարեն մեր հարեւանները վերջապես պետք է հանգեն եզրակացության, որ պատմության անիվը շրջել այլեւս հնարավոր չէ:

■

# Սիսիանը հիշում է մեծ զորավարին նաեւ մեր օրերում...

էջ 7

ջրվեժն ու նրա ջրերում խայտացող կարմրախայտը…

«Տեր ու հնազանդ եղեք միմյանց, ընտանիք դարձեք»՝ ասել էր ու ինքը Շաքեից հետ դառել Անգեղակոթ:

Անցնում է մի քանի օր ու մեկ էլ հայտնի է դառնում, որ էս ջահելների սրտով չէր ո՛չ պսակը, ո՛չ իրենց զույգը եւ ոտքով Շաքեից եկել-հասել էին Անգեղակոթ՝ բողոքի:

Է՜, Անդրանիկի դեմն առնել կլինի՞: Նստում է ճերմակ ձին եւ մտրակելով ձիուն օդ թռցնում: Ո՞նց թե: Բա էդքան զրույցն իզո՞ւր էր: Ինքը չի՛ հրամայել: Ինքը հասկացրել է, որ ընտանիքն ու սերունդն ավելի լուրջ եւ ավելի ճիշտ կռիվ է թշնամու դեմ, քան կրակել-սպանելը: Եվ բոլոր զույգերին ձիու առաջն արած նորից հետ է բերում, հասցնում Շաքե: Դա մոտ մեկ ժամվա քայլելու ճանապարհ է: Երբ տեղ է հասնում, իջնում է ձիուց՝ գյուղի ծայրին ու հորդորում՝

- Ձեր ցավը տանեմ: Հասկացեք ինձի, իրար հասկացեք…

Այսքանը:

Դե ի՞նչ ասեմ: Հարցնում եմ Վարդանին՝ ո՞վ է հեղինակը զրույցի:

- 1985 կամ 86թ. օգոստոսն էր, երբ Անգեղակոթի ձորում մեծ ջրատար էինք անցկացնում, գյուղացիներն ուրախությունից համարյա ամեն օր մեզ համար հաց էին սարքում, հյուրասիրում, իրենք էլ հերթով գալիս, ուտում-խմում էին մեզ հետ: Սովորաբար հաց էինք ուտում Սուրբ Վարդան մատուռի մոտ, շիկացած քարերի վրա: Ամեն օր գյուղացիները մի հրաշք զրույց էին պատմում եւ մեր զարմացած հայացքներին ի պատասխան՝ աչքերն ուղղելով դեպի մատուռը, երդվում էին՝

- Էս սուրբը վկա, ճիշտը կըսենք…

Դե ինչ:

Հավատանք, որ մանկուց որբացած, ընտանիք ու զավակ կորցրած, կյանքն ազգին նվիրած Անդրանիկը՝ հայր ու քավոր է կանգնել կռվի մեջ իրենց կյանքն ու սերը մոռացած ջահելներին:

Հավատանք, որ Անդրանիկին բարի խորհրդատու է եղել իր ընտանիքն ազգին մատաղ տված Սոսե մայրիկը:

Հավատանք, որ Սրբ Վարդան Զորավար մատուռի մեջ անգեղակոթցիներն իրական պատմություն կպատմեին:

Հավատանք, որ հայն ամեն պահ կմտածի իր ազգի ապագայի մասին, ինչպես որ է:

**Կերակրող ձեռքը պիտի համբուրել...**

1918թ. օգոստոսին Սիսիանի զինված ուժերի շտաբի պետ Զախար Տեր-Ղազարյանը, լսելով, որ գաղթականության եւ զորքի հետ Գորիս մտած Զորավար Անդրանիկը սննդապահովման հետ կապված խնդիրներ ունի, հասնում է Գորիս եւ ժողովրդի անունից նրան հրավիրում Սիսիան: Զորքին ու գաղթականությանը բաժանեցին ըստ գյուղերի. մի զգալի թիվ տեղավորվեց Բռնակոթում: Զորավարը լավ իմանալով, թե ինչ զոհողությունների է գնում ժողովուրդը, հատկապես զինվորներին խիստ զգուշացրել էր՝ որեւէ ավելորդություն թույլ չտալ: Հակառակ դեպքում՝ դատ ու դատաստան էր սպասվում:

...Բռնակոթում, բոլոր տների պես, երկու զինվոր հանձնվեց Եղո Ղազարյանի ընտանիքին: Այս ընտանիքը հայտնի էր իր քաջությամբ, հյուրընկալությամբ: Տղամարդիկ կռվում էին, իսկ տունը ղեկավարում է Սալբիին, նրանց մայրը՝ խիստ, պահանջկոտ, խանում մի կին: Ամեն Աստծո առավոտ, իր ընտանիքին հավասար, Սալբիին հաց էր տալիս նաեւ զինվորներին, իսկ ձիերի համար խոտ իջեցնել տալիս մարագի կտուրից: Ամեն ինչ չափած-հաշված էր այնպես, որ ձմեռն անկորուստ դուրս գան. ժամանակները դաժան էին, կռիվ էր ու սով: Մի օր էլ, շատ պատահականորեն, Սալբիին տեսավ, որ զինվորներից մեկը՝ բարձրացած աստիճաններին, մարագի կտուրից խոտ է գողանում: Աղմուկ-աղաղակով նա բարձրանում է աստիճաններն ի վեր, քաշում զինվորի ոտքերից: Վերջինս ոտքով հրում է Սալբիին, եւ կինը, կորցնելով հավասարակշռությունը, աստիճաններից ցած է գլորվում՝ կոտրելով թեւն ու ոտքը:

…Լուրը թեւեր ունի, հասավ Անդրանիկի ականջին: Վերջինս իր ոտքով գնաց Սալբիին տեսնելու: Բոլորը՝ մոռացած հիվանդին, խառնվել էին իրար. ինքնաեռը վառել էին, տակը փռած խոնավ սրբիչի մեջ ձու դրել՝ խաշելու համար: Լավաշ էլ կար: Անդրանիկին դիմավորեցին տան բակում, ապա նա մտավ ներս, նստեց կրակին մոտ՝ կաղնե փայտից պատրաստված սնդուկին: Սկսվեց հարցուփորձը: Զորավարն ուզում էր ամեն ինչ մանրամասն իմանալ: Պարզ էր, որ նա իրեն շատ վատ է զգում, վիրավորված է զինվորների արարքից: Բայց եւ այնպես նա հյուրասիրվեց: Տեսնելով, թե ինչպես է թեյը եռալուն հետ նաեւ ձուն խաշվում՝ ինքնաեռի տակ դրված խոնավ սրբիչի մեջ փաթաթված, զարմացավ՝

- Ա՜յ թե հնարամիտ է մեր ժողովուրդը, - խոսեց զորավարը, ապա մթնվեց ու ավելացրեց՝

- Հեշտ կյանքից չէ երեւի…

Երեկոյան, ուշ ժամի, գյուղում Զորավարը խորհուրդ հրավիրեց եւ պատժեց մեղավոր զինվորին՝ երկու օր նրան կալանք տալով:

- Կերակրող ձեռքը համբուրել է պետք, ոչ թե կոտրել, - սա էր նրա հորդորը:

Պատմությունը մեզ տրամադրել է Սալբիի թոռը՝ պապի անունը կրող Եղիշե Ղազարյանը:

**Թող սիրով լինի...**

Նշանել էր բռնակոթցի Խաչատուրն աղջկան Առաքելի հետ՝ առանց որեւէ մեկի կարծիքը հարցնելու: Պարզ, աշխատավոր տղա էր Աքելը, բայց աղջկա սիրտը ոչ մի կերպ նրան չէր կպնում: Գիշեր-ցերեկ լացում էր, ասելով՝ «Նշանս քանդեք, ես դրան տեսնել չեմ ուզում, չեմ սիրում… »: Ի՞նչ աներ հայրը: Աշխարհում կռիվ էր, կոտորած, վաղվա օրվա հույս չկար, իսկ Խաչատուրի աղջկա կռիվն իր սրտի մեջ էր՝ սիրո համար: Բռնակոթցիները գիտեին, թե Զորավարը որ օրն է գյուղ գալիս՝ դատ կտրելու, գյուղացիների հոգսն ու ցավը կիսելու: Հենց էդ օրն էլ Խաչատուրն իր Աստղիկ աղջկան վերցրած գնաց փաշայի մոտ, պատմեց գլխին եկածը: Լսում էր Զորավարը նրան, լսում էր լո՜ւռ, մի քիչ լարված. ո՞վ գիտի, ինչեր հիշեց… Լսեց, լռեց երկար: Շվարած Խաչին նայում էր աղջկան՝ դեռ 14-ը չբոլորած, հանդուգն, համարձակ Աստղիկին: Քարի պես լուռ աղջկա աչքերից գետի նման գլոր-գլոր արցունք էր հոսում, այտերով իջնում ցած:

- Հը՛, բա հիմի ի՞նչ էնենք, - Զորավարը ոչ թե հորը, այլ աղջկան ուղղեց հարցը:

Ո՜վ զարմանալի… Ամեն ինչ պատրաստ էին տեսնել ու լսել գյուղացի հայրն ու աղջիկը՝ թշնամու ահ ու սարսափ Անդրանիկից, բայց ոչ այդքան քնքշանք ու սեր… Եվ առանց երկար-բարակ անելու, Աստղիկն իրեն նետեց Զորավարի ոտքերի տակ՝

- Ինձ կուտուր-կուտուր արա, փաշա՛, բայց ոչ մի կուտուրս ալ Աքելին չտաս…

Նշանը քանդեցին: Փաշան գրեթե անլսելի արտաբերել էր՝ «Ինչ լինելու է, թող սիրով լինի… »:

Անցավ մի քանի ամիս, փաշան հեռացավ, գնաց Զանգեզուրից, իսկ Աստղիկը դարձավ 16 տարեկան, մնաց հոր տանը: Գյուղում այդ տարիքին հասած աղջիկներին ասում էին՝ «Քյավքառած, տանը մնացած աղջիկ»: Հետո Աստղիկին առավ բռնակոթցի Վարդանը, որի մայրը մահացել էր՝ որբության մատնելով 10 երեխայի: Վարդանը տան ավագն էր, եւ ամբողջ հոգսն ընկավ Աստղիկի ուսերին: Աստղիկն ինքը յոթ երեխա բերեց, դժվարությունների, դառնությունների դեմ առավ:

Բախտ էր, ու դրանից չես փախչի: Գուցե նաեւ դա էր պատճառը, որ նեղված պահերին Աստղիկը հիշում էր Զորավարին, նրա կտրած դատը, արտաբերած բառերն ու ինքն իրեն հարցնում էր՝ «Տեսնես սիրովը ո՞նց է լինում»:

Ավելացնեմ, որ այս պատմությունը թանգարանին է տրամադրել Աստղիկի ծոռնուհին՝ գեղանկարիչ Զառա Գասպարյանը: ■

**ԽՈՍՔ ՀԻՇԱՏԱԿԻՑ**

Կապանի թիվ 2 երաժշտական դպրոցը խոր կսկիծով եւ ափսոսանքով հրաժեշտ տվեց դպրոցի լավագույն եւ առաջատար դասատուին՝ **Ռենա Արամի Աթաբեկովային**: Ռենա Աթաբեկովան ծնվել է 1956թ. Բաքու քաղաքում: Ավարտելով տեղի երաժշտական դպրոցը բարձր առաջադիմությամբ՝ 1973թ. ընդունվել է Կապանի երաժշտական ուսումնարանի դաշնամուրային բաժին: Ավարտելուց հետո 1977թ. աշխատել է Ագարակի ՄԵԴ-ում: 1978թ-ից տեղափոխվել եւ աշխատանքի է անցել Կապանի թիվ 2 երաժշտական դպրոցում, միաժամանակ աշխատել է Կապանի արվեստի պետական քոլեջում: Որտեղ էլ որ աշխատել է, աչքի է ընկել իր բարձր մակարդակով, կարողացել է գտնել իր ուրույն տեղը՝ անմոռաց նվիրվելով իր մասնագիտությանը:

Նրա սաները տարբերվել են իրենց բարձր երաժշտական ճաշակով: Մասնակցել են տարբեր միջազգային եւ հանրապետական մրցույթների ու վերադարձել դիպլոմներով, խրախուսանքներով:

Նրա յուրովի ձեռագիրը եւ վաստակած մանկավարժական փորձը երկար կուղեկցեն մեզ, իսկ հիշատակը հավերժ կմնա մեր սրտերում:

**Կապանի թիվ 2 երաժշտական դպրոց**


**ՀՀ կառավարությունը հրավիրում է համագործակցության Սյունիքի մարզում ստեղծվող ազատ տնտեսական գոտու պոտենցիալ կազմակերպիչներին**

**Հարգելի գործընկերներ**

ՀՀ կառավարությունը հանդես է եկել Սյունիքի մարզում Իրանի Իսլամական Հանրապետության հետ սահմանակից գոտում ազատ տնտեսական գոտի ստեղծելու նախաձեռնությամբ: Արդեն իսկ մշակվել է ազատ տնտեսական գոտու գործարար ծրագիրն, որում ամփոփված հաշվարկները վկայում են նախաձեռնության բարձր տնտեսական շահավետության մասին:

**Ծրագրի առավելություններն են.**

- Ազատ տնտեսական գոտու՝ պետություն-մասնավոր գործընկերության ձեւաչափով հիմնադրման հնարավորությունը:
- Ծրագրի բարձր եկամտաբերություն եւ ներդրումների արագ հետգնում:
- Հարկային արտոնություններ կազմակերպչի եւ շահագործողների համար:
- Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցությամբ բացվող առեւտրատնտեսական հնարավորությունները, այդ թվում՝ ԵԱՏՄ եւ ԻԻՀ միջեւ բանակցվող ազատ առեւտրի համաձայնագիրը:
- Հայաստանի Հանրապետության արտոնյալ առեւտրային ռեժիմներ ԵՄ, ինչպես նաեւ ԱՄՆ-ի, Կանադայի, Շվեյցարիայի, Ճապոնիայի եւ Նորվեգիայի հետ:

ՀՀ կառավարությունը հրավիրում է համագործակցության Սյունիքի մարզում ստեղծվող ազատ տնտեսական գոտու պոտենցիալ կազմակերպիչներին, ինչպես նաեւ ընդունում է ազատ տնտեսական գոտում շահագործողի կարգավիճակով գործունեություն ծավալելու համար նախնական դիմումներ:

Հեռ.՝ +374 11 597 127,
e-mail: invesement@mineconomy.am

**18 հունվար, 2017**
**mineconomy.am**


**«Հայ մամուլի» կանաչ կրպակներում հեռախոսի հաշիվների լիցքավորումն՝ առանց հավելավճարի**

Վերջերս շուկայում տեղի ունեցած փոփոխությունների արդյունքում շատ տեղերում սկսել են գանձել հավելավճարներ հեռախոսի լիցքավորումներից, ինչը բավականին դժգոհություններ է առաջացրել քաղաքացիների մոտ:

«ՊրեսսՍտենդ» ՍՊԸ-ն՝ հավատարիմ մնալով իր մշտական քաղաքականությանը, չի փոփոխել իր աշխատանքային սկզբունքները եւ լրացուցիչ հավելավճարներ չի գանձում իր հաճախորդներից: Մոտեցեք ցանկացած մեր կրպակի եւ լիցքավորեք Ձեր հեռախոսի հաշիվն առանց որեւէ հավելավճարի:


**Սյունյաց Երկիր**

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
**«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»**
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր՝
**ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռ.՝ **(0285) 5 25 63,**
**(091) 45 90 47,**
**(077) 45 90 47**:
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
էլ.կայք՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Պետական աջակցություն՝ տարեկան 500000 ՀՀ դրամ:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1730, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 15.02.2017թ.: